

891 71
7-97

ԸՆԴՈՍՏԵՂԹԻ ՍԱՀՄԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՐՆ

ԱՍՊՈՒՇԿԻՆ



ԿՐԱԿՈՑ

ԲՈՒՔԸ

ՓՈՍՏԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿՍՑՈՒՆ

891.71

7-90

Հրատարակված 1937 Յերեսկ

81

NOV 2010

ՊՈՒՇԿԻՆՆԵՍԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.71

7-97
այ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ԿՐԱԿՈՑ
ԲՈՒՔԸ
ՓՈՍՏԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ

Թարգմ.
Հ. ՏԵՐ-ԱՎԵԳՅԱՆ





Կ Ր Ա Կ Ո Ց

I

Կրակում եյինք իրար վրա:

Բարատինսկիյ¹

Յես յերգվեցի խիել նրան ըստ
դուելի իրավունքի (նրա վրա մնա-
ցել և դեռ իմ կրակոցը):

Յերկինն քացոքյազում²

Մենք ոթեանում եյինք **** ավանում: Բանակային սպայի
կյանքը հայտնի չէ: Առավոտյան պարապմունք, մանեթ³: Ճաշը—
զնդի հրամանատարի մոտ կամ ջհուղի պանդոկում: Յերեկոյան
փունջ և թղթախաղ:

...ում ջկար վոչ մի հյուրընկալ բաց տուն, վոչ մի հարս-
նացու: Մենք հավաքվում եյինք իրար մոտ, ուր, բացի մեր
համազգեստներից, ուրիշ վոչինչ չեյինք տեսնում:

Միայն մի մարդ կար, վոր պատկանում էր մեր հասարա-
կությանն առանց զինվորական լինելու: Նա մոտ յերեսուն հինգ
տարեկան էր և դրա համար մենք համարում եյինք նրան ծե-
րունի: Փորձառությունը շատ առավելություններ էր տալիս
նրան մեր հանդեպ: Դրա հետ միասին նրա սովորական մոռյու-
թյունը, խիստ բնավորությունը և չար լեզուն ուժեղ ազդեցու-

¹ Յե. Ա. Բարատինսկի (1800—1844) Պուշկինի ժամանակի ականավոր լա-
նաստեղծ: Բնաբանը վերցված է նրա «Բալ» պոեմից:

² Պուշկինյան ժամանակի հայտնի դրոշ — Մարլինսկու վիպակը — դե-
կարբրատ Ա. Ա. Բեստուեժեվի գրական մականունը (1797—1837):

³ Մանեթ, ձիավարժարան — մի շենք, վորի մեջ սովորում էին ձիով ման
դալ կամ հետևակ զորքը ռազմական ուսուցում և ստանում:

թյուն ունեցին մեր յերեւոյստարդ մտքերի վրա: Ինչ-վոր խոր-
հրդալուրություն եր շրջապատում նրա բախտը: Նա ուստի
նման եր, իսկ տառապողի անուն եր կրում: Անցյալում նա հո-
ւար եր յեղել, և նույն իսկ հաջողակ հուսար: Վոչ-վոք չգիտեր,
թե ինչ պատճառներ եյին գրգռել նրան: Թողնել ծառայությունն
ու բնակվել աղքատիկ ավանում, ուր նա ապրում եր՝ միաթա-
մանակ և աղքատ և շոտյ՝ ման եր գալիս միշտ վոտքով, մաշ-
ված սև սերթուկով, բայց սեղանը միշտ բաց եր մեր գնդի բո-
լոր սպանների համար: Ճիշտ ե, նրա ճաշը բաղկացած եր յեր-
կու կամ յերեք տեսակից, վոր պատրաստում եր պաշտոնաթող
մի գինյոր, բայց դրա հետ չամպանյան գինին գետի պես եր հո-
սում: Վոչ-վոք չգիտեր վոչ նրա կարողությունը, վոչ ել նրա
յեկամուտները, և վոչ վոք չեր համարձակվում հարցնել նրան
այդ մասին: Նրա մոտ գրքեր կային, մեծ մասամբ ռազմական ու
ռոմաններ: Նա ուրախությամբ տալիս եր կարդալու այդ գրքերը,
յերբեք յետ չպահանջելով: Դրա փոխարեն յերբեք չեր վերա-
դարձնում տիրոջն իր վերցրած գիրքը: Նրա գլխավոր վարժու-
թյունն ատրճառակից կրակելն եր: Նրա սենյակի պատերն ամ-
բողջովին ծակծկված եյին գնդակներով, ամբողջովին ծածկված
եյին անցքերով, կարծես մեղվի չեչեր լինեյին: Ատրճառակների
հարուստ հավաքածուն միակ չքեղությունն եր այն աղքատիկ
հյուղակում, ուր նա ապրում եր: Նա այդ արվեստում հասել
եր չտեսնված վարպետության, և յեթե նա հանձն առներ գըն-
դակով վայր բերել տանձը մեկն ու մեկի գլխարկի վրայից,
վոչ-վոք մեր գնդում չեր կտակածի իր գլուխը գնել նշանի տակ:
Պոսակցությունը մեր մեջ հաճախ վերաբերվում եր մենամար-
տերին: Սիրվին (այդպես կոչենը նրան) յերբեք չեր խառնվում
այդ խոսակցությանը: Յերբ հարցնում եյին՝ պատահե՞ր ե
նրան մենամարտել, պատասխանում եր չոր, թե պատահել ե,
բայց մանրամասնությունների մեջ չեր մտնում, և յերևում եր,
վոր նման հարցերը դուր չեյին գալիս նրան: Մենք յենթադրում
եյինք, վոր նրա խղճի վրա ծանրացած ե իր սոսկալի արվեստի
մի վորևե գժբախտ զոհը: Առենք, մենք մի բոպե իսկ չեյինք
մտածում կասկածել նրանում վորևե բան, վոր նման լիներ յերկ-
շտության: Կան մարդիկ, վորոնց հենց միայն արտաքինը հե-
ռու յե վանում այդպիսի կասկածանքները: Մի անսպասելի
գեպը չլսեցրեց մեզ բոլորիս:

Մի անգամ մի տաս հոգի մեր սպաններից ճաշում եյին Սիր-
վինի տանը: Խմում եյին ըստ սովորականին, այսինքն չափա-
զանց չատ: Ճաշից հետո մենք սկսեցինք համոզել տանտիրոջը
բանկ նետել մեզ համար: Յերկար հրաժարվում եր նա, վորով-
հետև գրեթե յերբեք չեր խաղում: Վերջապես, պատվիրեց բե-
րել խաղաթղթերը, մի հիսուն վոսկեդրամ լցրեց սեղանի վրա ու
սկսեց նետել: Մենք շրջապատեցինք նրան և խաղն սկսվեց:
Սիրվինն սովորություն ուներ կատարյալ լուրթյուն պահպանել
խաղի ժամանակ, յերբեք չեր վիճում և չեր բացատրվում: Յե-
թե պոնտյորը սխալվում եր հաշվի մեջ, նա կամ վճարում եր
պակասորդը կամ գրի առնում ավելորդը: Մենք արդեն նրան
գիտեյինք և չեյինք խանդարում տնորինել ըստ իրեն: Բայց մեր
մեջ գտնվում եր մի սպա, վոր դեռ նոր եր յեկել մեզ մոտ: Նա,
վոր նույնպես խաղում եր այդպեղ, անուշադրությամբ ծայցեց մի
ավելորդ անկյուն: Սիրվինն վերցրեց կավիճն ու հավասարե-
ցրեց հաշիվն ըստ իր սովորության: Սպան, կարծելով, վոր
նա սխալվեց, սկսեց բացատրվել: Սիրվինն լուռ շարունակում
եր նետել: Սպան, համբերությունը կորցնելով, վերցրեց խոզա-
նակն ու ջնջեց այն, ինչ իրեն թվում եր իզուր գրված: Սիրվինն
վերցրեց կավիճն ու գրեց նորից: Գինուց, խաղից ու ընկերների
ծիծաղից տաքացած սպան իրեն համարեց սաստիկ վիրավոր-
ված և, կատաղությամբ խլելով սեղանի վրայից պղնձե մոմա-
կալը, նետեց այն Սիրվինի վրա, վորը հաղիվ կարողացավ խու-
ստիկ հարվածից: Մենք շփոթվեցինք: Սիրվինն վեր կացավ,
գունատվեց չարությունից, աչքերը փայլատակեցին և նա ա-
սաց. «Վողորմած սրբոն, բարեհաճեցեք դուրս գալ և շնորհա-
կալ յեղեք աստծուց, վոր այդ բանը պատահեց մեր տանը»:

Մենք չեյինք կապածում հետևանքների մասին և պատկե-
րացնում եյինք մեր ընկերոջն արդեն սպանված: Սպան դուրս
յեկավ, ասելով, վոր վիրավորանքի համար պատրաստ ե պատա-
խան տալու, ինչպես ցանկալի կլինի բանկ նետողին: Խաղը չա-

1 Բանկ — ազատ թղթախաղ: Բանկ նետել — գնել վորոշ գումար, վոր
կոչվում ե բանկ, և խաղալ նրա վրա: Բանկ նետող — այն խաղացողն ե, վո-
րը բռնել ե բանկը: Պոնտյորներ — խաղացողներ, վորոնք փող են գնում նրա
հանդեպ:

2 Մալել անկյուն — ծալել խաղաթղթի անկյունը, վորը վորջում եր
խաղաղութարի մեծությունը:

բունակվեց ելի միջանի բոպե, բայց զգալող, վոր տանտերն արդեն դուրս չունեն խաղի հետ, մենք յետ կանգնեցինք մեկս մյուսի յետևից ու ցրելով յեկանք դեպի մեր բնակարանները, զրուցելով շուտափուլով վաղանտիայի¹ մասին:

Մյուս օրը մանեփում մենք արդեն հարցնում էյինք իրար՝ կենդանի² յե արդյոք, դեռևս խեղճ պորուչիկը, յերը նա ինքը հայտնվեց մեր մեջ: Մենք նրան նույն հարցը տվինք: Նա պատասխանեց, վոր Սիւլիոյից վոչ մի տեղեկութիւն չունի: Դա զարմացրեց մեզ: Մենք գնացինք Սիւլիոյի մոտ և նրան գտանք իր բակում: Նա զնդակ գնդակի յետևից հասցնում եր խաղաթղթի մեկնոցին, վոր փակցված եր դարպասին: Նա ընդունեց մեզ սովորականի նման, առանց մի խոսք ասելու յերեկվա դեպքի մասին: Անցավ յերեք օր: Պորուչիկը դեռ կենդանի յեր: Մենք զարմացած հարցնում էյինք՝ մի՞թե Սիւլիոն չի մենամարտելու: Սիւլիոն չեր մենամարտում: Նա բավարարվեց մի թեթև բացատրութեամբ ու հաշտվեց:

Սկզբում դա չափազանց վարկարեկեց նրան յերիտասարդութեան աչքում: Քաջութեան պակասութիւնն ամենից ավելի քիչ և ներվում յերիտասարդ մարդկանց կողմից, վորոնք քաջութիւնը սովորաբար համարում են մարդկային առավելութիւնների դադաթնակետը և ամեն տեսակի արատներին ներումը: Սա՛խն, կամաց-կամաց ամեն ինչ մոռացվեց և Սիւլիոն նորից վերականգնեց իր առաջվա ազդեցութիւնը:

Միայն յես էյի, վոր արդեն չէյի կարողանում մոտենալ նրան: Բնականից ումանտիկական յերեակայութիւնն ունենալով, դրանից առաջ յես բոլորից ավելի էյի կապված այդ մարդու հետ, վորի կյանքը մի հանելուկ եր և վորն ինձ թվում եր ինչ-վոր խորհրդավոր վեպի հերոս: Նա սիրում եր ինձ: Այսինքն գոնե ինձ մոտ միայն թողնում եր իր սովորական խոստանքի չարախոսութիւնն ու խոսում դանդան հարցերի մասին պարզասրտութեամբ ու արտակարգ գուրեկանութեամբ: Բայց չարաբաստիկ յերեկոյից հետո, այն միտքը, թե նրա պատիւն արատավորված և է չի մաքրված իր իսկ սեփական կամքով, այդ միտքն ինձնից չեր հեռանում ու խանդարում ինձ վարվել նրա հետ առաջվա պէս: Յես ինձ հա-

մար անհարմար էյի համարում նայել նրան: Սիւլիոն չափազանց խելոք եր ու փորձված, վորպեսզի չնկատեր այդ բանը և չհասկանար դրա սրտաճառը: Թվում եր, թե դա վշտացնում եր նրան: Համենայն դեպս մի յերկու անգամ յես նկատեցի, վոր նա ցանկութիւն ունի բացատրութիւն տալու ինձ, բայց յես խուսափում էյի այդպիսի առիթներից և Սիւլիոն ինձանից ձեռ քաշեց: Դրանից հետո յես նրա հետ տեսնվում էյի միայն ընկերների ներկայութեամբ և մեր առաջվա անկեղծ խոսակցութիւնները դադարեցին:

Մայրաքաղաքի մտացրելով բնակիչները հասկացողութիւն չունեն այն բազմաթիւ տպավորութիւնների մասին, վոր ծանոթ են դուռերի ու ավանների բնակիչներին. որինակ, փոստի ուղևոր սպասելը. յերեքշաբթի և հինգշաբթի օրերը մեր գնդի գրասենյակը լիքն եր լինում սպաներով: Վո՛րն սպասում եր փողի, վո՛րը նամակի, վո՛րը լրագրի: Ծրարները սովորաբար հենց այդտեղ բաց էյին արվում, նորութիւնները հաղորդվում, և գրասենյակն ամենաաշխույժ պահերն եր ներկայացնում: Սիւլիոն մեր գնդի հասցեյով եր նամակներ ստանում և սովորաբար նա եր արդեօք գտնվում: Մի անգամ նրան մի ծրար տվին, վորի վրայից նա կնիքը պոկեց մեծագույն անհամբերութեամբ: Նստահը կարգաբիւ, նրա աչքերը փայլատակում էյին: Սպաները, յուրաքանչյուրն իր նամակներով զբաղված, վոչինչ չնկատեցին: «Պարոնայք, — ասաց նրանց Սիւլիոն, — հանգամանքները պահանջում են, վոր յես անմիջապէս բացտակայիմ: Ծանապարհ եմ ընկնում այս գիշեր: Հուսով եմ, վոր դուք չեք հրաժարվի ճաշել ինձ մոտ վերջին անգամ: Յես սպասում եմ և՛ ձեզ, — չորունակեց նա, դիմելով ինձ, — կսպասեմ անպայման»: Այս խոսքից հետո նա շտապով դուրս յեկավ, իսկ մենք, համաձայնութեան գալով հանդիպելու Սիւլիոյի մոտ, ցրվեցինք:

Յես յեկա Սիւլիոյի մոտ նշանակված ժամին և դուռ այնտեղ գրեթե մեր առջողջ գունդը: Նրա ինչքն արդեն պատրաստ եր ճանապարհի համար: Մնում էյին միայն մերի, գնդակներով ծակծկված պատերը: Մենք սեղան նստեցինք: Տանտերը չափազանց լավ տրամադրութեան մեջ եր և շուտով նրա ուրախութիւնը դարձավ ընդհանուր: Խցանները չրխկում էյին ամեն բոպե, բաժակները փրփրում էյին ու խչչում անդադար և մենք ամենայն յեռանդով ցանկանում էյինք գնացողին բարի ճանա-

1 վաղանտիա — ազատված տեղ ծառայութեան մեջ:

2 Պորուչիկ — տեղակալ, սպայական մի կոչում: Մ. Բ.

պարհ և ամեն տեսակի բարեքններ: Արդեն ուշ յերեկո յեր, յերբ վեր կացանք սեղանից: Գլխարկները վերցնելիս, Սիլվիոն, բոլորին մնաս բարով ասելով, բռնեց իմ ձեռքն ու կանգնեցրեց հենց այն բոպեյին, յերբ յես պատրաստվում էյի դուրս գալ: «Յես պետք է խոսեմ ձեզ հետ», ասաց նա ցածր ձայնով: Յես մնացի:

Հյուրերը զնացին: Մենք մնացինք յերկսով, նստեցինք իրար հանդեպ և անխոս վառեցինք մեր ծխամորճերը: Սիլվիոն մտազբաղ էր: Նրա ուրախ տրամադրություն հետքն ել չկար արդեն: Մուսյլ գունատությունը, փայլատակող աչքերը և բերնից դուրս յեկող թանձր ծուխը իսկական դեկ տեսք էյին տալիս նրան: Անցավ մի քանի բոպե և Սիլվիոն ընդհատեց լուսթյունը: «Դուցե և մենք յերբեք չտեսնվենք,— ասաց նա ինձ:— Անջատվելուց առաջ յես կուզեյի բացատրել ձեզ հետ: Դուք կարող էյիք նկատել, վոր յես քիչ եմ հարգում կողմնակի կարծիքը, բայց յես ձեզ սիրում եմ և զգում եմ՝ ինձ համար ծանր կլինենր անարդարացի տպավորություն թողնել ձեզ վրա»:

Նա կանգ առավ և սկսեց լցնել իր վառված ծխամորճը: Յես լուռ էյի, աչքերս զնայեիս հարած:

«Ձեզ համար տարրինակ էր,— շարունակեց նա,— վոր յես քաղաքացիական չարահանջեցի այդ հարբած խելացնոր Բ***-ից: Դուք համաձայնեցեք, վոր, ունենալով զենքի ընտրության իրավունքը, նրա կյանքն իմ ձեռքում կլինենր, իսկ իմը գրեթե անվտանգ, յես իմ չափավորությունը կարող էյի վերագրել լոկ մեծահոգության, բայց չեմ ուզում ստել: Յեթե յես կարողանայի պատժել Բ***-ին, իսպառ վտանգի յենթարկելով իմ կյանքը, ապա յես վոչ մի դեպքում չեյի ների նրան»:

Յես նայում էյի Սիլվիոյին գարմանքով: Այդպիսի խոստովանությունը միանգամայն շփոթեց ինձ: Սիլվիոն շարունակեց.

«Ճիշտ այդպես է, յես իրավունք չունեմ ինձ մահվան յենթարկելու: Վեց տարի սրանից առաջ յես մի ապտակ եմ ստացել և իմ թշնամին դեռ կենդանի յե»:

Իմ հետաքրքրությունը սաստիկ զրդոված էր: «Դուք նրա հետ չմենամարտեցի՞ր,— հարցրի յես,— հանդամանքները յերեմի ձեզ անջատեցի՞ն»:

«Յես նրա հետ մենամարտեցի,— պատասխանեց Սիլվիոն,— և ահա մեր մենամարտի հիշատակը»:

Սիլվիոն վեր կացավ ու հանեց կարտոնի միջից մի կարմիր գդակ վոսկե փնջով ու տրեղով (այն, ինչ վոր ֆրանսիացիներն անվանում են bonne de police¹): Նա գդակը դրեց գլխին: Գդակը զնդակով ծակված էր ճակատից մի վերջով բարձր:

«Դուք գիտե՞ք,— շարունակեց Սիլվիոն,— վոր յես ծառայում էյի *** հուսարական զնդում: Իմ բնավորությունը ձեզ հայտնի յե. յես սովորել եմ առաջինը լինել, իսկ յերիտասարդ ժամանակից՝ դա կիրք էր դարձել իմ մեջ: Մեր ժամանակ աղմկարարությունը մոզա յեր՝ յես առաջին աղմկարարն էյի բանակում: Մենք պարծենում էյինք հարբեցողությանը. խմելու մեջ յես հաղթեցի փառապանծ Բուրցովին, վորին յերգել է Դենիս Դավիդովը²: Մենամարտեր պատահում էյին մեզ մոտ ամեն մի բոպե՝ յես բոլոր մենամարտերում կամ վկա էյի, կամ գործող անձ: Ընկերներս ինձ պաշտում էյին, իսկ զնդի հրամանատարները, վորոնք ամեն բոպե փոխվում էյին, ինձ նայում էյին, վորտեղ մի անխուսափելի չարիքի:

Յես հանդիստ (կամ անհանդիստ) վայելում էյի իմ փառքը, յերբ նշանակվեց մեզ մոտ մի յերիտասարդ մարդ՝ հարուստ և անվանի տոհմից (չեմ ուզում նրա անունը տալ): Կյանքիս մեջ չեյի տեսել այդպիսի մի փայլուն բախտի տեր մարդ: Յերևակայեցեք դուք՝ յերիտասարդություն, խելք, զեղեցկություն, ամենակատաղի ուրախություն, ամենամահող քաջություն, բարձր անուն, փող, վորին հաշիվ չկար և վորը յերբեք չեր պակասում նրա մոտ, և պատկերացրեք, թե ի՞նչ ներգործություն պիտի ունենար նա բոլորիս վրա: Իմ առաջնությունը խախտված էր: Հրապուրվելով իմ փառքով, նա փորձեց ձեռք բերել իմ բարեկամությունը: Բայց յես ընդունեցի նրան սառը, և նա առանց վորեւե ափսոսանքի հեռացավ ինձանից: Յես նրան ատեցի: Նրա հաջողությունները զնդում և կանանց շրջանում լիակատար հուսահատություն էյին հասցնում ինձ: Յես սկսեցի կռվի առիթ փնտռել: Նա իմ եպիգրամներին պատասխանում էր եպիգրամ-

¹ Վոստրիկանական գդակ:

² Դենիս Դավիդով (1784—1839) — բանաստեղծ և պարտիզան 1812 թվի պատերազմում, Պուշկինի ընկեր: Ա. Պ. Բուրցով — հուսար, Դավիդովի ծառայակիցը: Ժամանակակիցների վկայությամբ «մեծագույն զվարճասերը և ամենաառաջին հարբեցողն էր բոլոր հուսարային պորուշիկների մեջ»: Նրան է ուղղված Դավիդովի վոտանավորը՝ «Բուրցով, բոթի, կովարար, չչակից իմ թշնմակին»:

ներով, վորոնք միշտ թիւում եյին ինձ ավելի անսպասելի և ավելի սուր, քան իմ դրածները և վորոնք, իհարկե, անհամեմատ ավելի զվարթ եյին. նա կատակ եր անում, իսկ յես չարանում եյի: Վերջապես, մի անգամ պարահանդեսի ժամանակ լեհ կալվածատիրոջ մոտ, տեսնելով, վոր նա բոլոր կանանց ուշադրութեան առարկան է դարձել, առանձնապես իրեն՝ տանտիրինոյ, վորի հետ յես կապ ունեյի, ինչ վոր տալիս ու կոպիտ խոսք ասացի նրա ականջին: Նա բռնեց ու մի ապստակ հասցրեց ինձ: Մենք նետուեցինք դեպի մեր թրերը: Կանայք ուշադրաց յեղան: Մեզ քաջ տալով հեռացրին իրարից և նույն գիշերը մենք գնացինք մենամարտելու:

Լուսաբացին եր այդ: Յես կանգնել եյի նշանակված տեղում իմ յերեք մարտավիպներին հետ: Անբացատրելի անհամբերութեամբ սպասում եյի իմ հակառակորդին: Գարնանային արևը ծագեց և շոգն արդեն վրա յեր հասնում: Յես նրան տեսա հեռվից: Նա գալիս եր վտռով, համազգեստը թրի վրա քցած, ու նրան ուղեկցում եր մի մարտավիպ: Մենք գնացինք նրան ընդառաջ: Նա մոտեցավ, կեռասով լիքը գդակը ձեռին: Մարտավիպները չափեցին մեզ համար տասնյերկու քայլ: Յես պիտի առաջինը կրակեյի, բայց չարութեան հուզմունքն այնքան ուժեղ եր մեջս, վոր չմտահեցի իմ ձեռքի ճշտութեանը, և, վորպեսզի ժամանակ տամ ինձ հովանալու, առաջին կրակոցը գիշեցի նրան: Իմ հակառակորդը չեր համաձայնում: Վորոշեցինք փիճակ գցել. առաջին համարն ընկավ նրան, բախտի այդ հավիտենական սիրելիին: Նա նշան բռնեց ու գնդակը ծակեց իմ գլխարկը: Հերթն իմն եր: Նրա կյանքը վերջապես իմ ձեռքին եր: Յես ազահորեն նայում եյի նրան, աշխատելով անհանգստութեան գեթ մի փոքրիկ սովեր նկատել նրա գեմքին: Նա կանգնած եր ատրճանակի առջև, գլխարկի միջից վերցնում եր հասած կեռասներն ու բերնից դուրս նետում կորիզները, վորոնք հասնում եյին ինձ: Նրա ստոնասրտութունը կատաղեցրեց ինձ: Ինչ ոգուտ կուներնամ, — մտածում եյի յես, գրկել նրան կյանքից, յերբ նա բոլորովին չի գնահատում այն: Չարանենդ մի միտք ծագեց իմ գլխում: Յես իջեցրի ատրճանակս: Դուք հիմա, յերևի, ժամա-

1 Մարտավիպ — սեկունդանտ — մարդիկ, վորոնք ընտրված են կռիվների կողմից: Մարտավիպների պարտականությունն ար մենամարտի կազմակերպումը և հետևել, վորպեսզի այն ընթանա ճիշտ սահմանված կանոններով:

նակ չունեք մահվան մասին մտածելու, ասացի յես նրան, դուք քարեհաճում եք նախաճաշել, յես չեմ ուզում ձեզ խանդարել: Դուք բոլորովին չեք խանդարում ինձ, առարկեց նա, բարեհաճեցեք կրակել ձեզ համար, ասենք՝ ինչպես ցանկալի յե ձեզ: Ձեր կրակոցը մնում է ձեզ, յես միշտ պատրաստ եմ: Յես դարձա մարտավիպներին, հայտարարելով, թե այսօր յես մտադիր չեմ կրակել, և մենամարտը դրանով էլ վերջացավ:

Յես դուրս յեկա ծառայութեանից ու առանձնացա այս ավանում: Այդ ժամանակից վեր որ չի լինում, վոր յես չմտածեմ վրեժ առնելու մասին: Հիմա այդ ժամը հասել ե...

Սիլվիոն հանեց գրպանից առավոտյան նտացած նամակն ու տվեց ինձ, վոր վարդամ: Ինչ-վոր մեկը (թիւում եր՝ նրա գործերի հավատարմատարը) դրոմ եր նրան Մոսկվայից, թե հայտնի անձնավորութունը շուտով պիտի որինապես ամուսնանա մի յերիտասարդ ու գեղեցիկ որիորդի հետ:

«Դուք գլխի ընկնում ե՞ք, — ասաց Սիլվիոն, — թե ո՛վ է այդ հայտնի անձնավորութունը: Գնում եմ Մոսկվա: Տեսնենք արդյոք նույնքան ստոնասիրտ կընդունվե՞ նա մահը իր հարսանիքի նախորդակին, ինչպես յերբեմն նա սպասում եր մահվան կեռաս տետելով»:

Այդ խոսքերից հետո Սիլվիոն վեր կացավ և սկսեց սենյակում յետ ու առաջ անել, ինչպես վաղըն իր վանդակում: Յես լսում եյի նրան առանց շարժվելու: Տարորինակ, հակասական զգացմունքներն արեկոծում եյին ինձ:

Ծառան ներս մտավ և հայտարարեց, թե ձիերը պատրաստ են: Սիլվիոն ամուր սեղմեց ձեռքս, մենք համբուրվեցինք: Նա նստեց կառքը, վորի մեջ դրված եյին յերկու ճամպրուկ՝ մեկը ատրճանակներով, մյուսը՝ նրա իրերով: Մենք նորից հրաժեշտ տվինք իրար, և ձիերը սլացան:

II

Անցավ մի քանի տարի, ընտանեկան հանգամանքներն փոփոխեցին ինձ բնակվել *** գավառի մի աղքատիկ գյուղում: Չբաղվելով տնտեսութեամբ, յես չեյի դադարում ավստոսանքով հիշել իմ առաջվա աղմկալի ու անհոգ կյանքը: Ամենից ավելի զեփար եր ինձ համար՝ աշխնային ու ձմեռային յերեկոները

կատարյալ մենութեան մեջ անցկացնելու ընտելանալը: Մինչև ճաշ յետ դեռ մի կերպ քաշ ելի տալիս ժամանակը, զրուցելով գլուղի ավազի հետ, շրջադայելով աշխատանքի վայրերը կամ այցելելով նոր ձեռնարկութունները: Բայց հենց վոր սկսում եք միջնել, յետ բոլորովին չեյի իմանում, թե ուր գնամ: Պահարանների տակ և նկուղում դառած փոքրաքանակ գրքերը յետ արդեն անգիր եյի արել: Բոլոր հեքիաթները, վոր կարողանում եր հիշել տնտեսուհի Կիրիլովնան, վաղուց մի քանի անգամ պատմված եյին: Կանանց յերգերը ձանձրույթ եյին առաջացնում իմ մեջ: Մեկ փորձեցի չքաղցրացրած մրգանուշը գործածել, բայց դրանից գլուխս ցավում եր: Մեկ ել վախեցա դառնամ վշտիցս հարբեցող, այսինքն ամենավատ հարբեցողը, վորպիսի որինակներ չատ եյի տեսնում յետ մեր դավառում: Մոտիկ հարևաններ յետ չունեյի, բացի յերկու յերեք «դառնացածներից», վորոնց զրույցը մեծ մասամբ բաղկացած եր զկրտոցներից ու հառաչանքներից: Միայնակութունն ավելի տանելի յեր ինձ համար:

Ինձանից չորս վերստ հեռու գտնվում եր կոմսուհի Բ ***-ին պատկանող հարուստ կալվածքը: Բայց այդտեղ ապրում եր միայն կառավարիչը, իսկ կոմսուհին իր կալվածքն այցելել եր միայն մի անգամ, իր ամուսնութեան առաջին տարին, այն ել ապրեց այդտեղ մի ամսից վոչ ավելի: Սակայն իմ մենակեցութեան յերկրորդ գարնանը լուր տարածվեց, թե ամուր կոմսուհին իր ամուսնու հետ պիտի գա իր գլուղը: Իսկապես նրանք յետևան հունիս ամսի սկզբին:

Հարուստ հարևանի գալը նշանավոր տարեթիվ եր գլուղական բնակիչների համար: Կալվածատերերն ու նրանց տնային ծառայողները զրուցում են այդ մասին մի յերկու ամիս դրանից առաջ և մի յերեք տարի ել դրանից հետո: Ինչ վերաբերում ե ինձ, ապա, խոստովանում եմ, վոր յերիտասարդ ու զեղեցիկ հարևանուհու գալն ուժգին ներգործութուն ունեցավ ինձ վրա: Յետ այրվում եյի նրան տեսնելու անհամբերութունից—և այդ պատճառով ել նրա գալուց հետո առաջին կիրակի որը, ճաշից հետո, ուղևորվեցի *** գլուղը՝ ներկայանալու նորին պաշտոնափայլութուններին, վորպես ամենամոտ հարևանը և ամենախոնարհ ծառայ:

Սպասավորը տարավ ինձ կոմսի առանձնասենյակը, իսկ ինքը գնաց, վոր զեկուցի իմ մասին: Ընդարձակ առանձնասենյակը

գարդարված եր ամենայն ճոխութեամբ: Պատերի մոտ կանգնած էյին գրքերով պահարանները և յուրաքանչյուրի վրա բրոնզե կիսանդրիներ: Մարմարե բուխարու վրա մի լայն հայելի կար: Հատակը պատած եր կանաչ մահուդով, վորի վրա փռված եյին գորգեր: Վաղուց հեռու լինելով ճոխութունից իմ աղքատիկ անկյունում և արդեն վաղուց տեսած չլինելով ուրիշի հարստութունը, յետ չփոթվեցի ու մի տեսակ սարսուռով եյի սպասում կոմսին, ինչպես դավառից յեկած խնդրատուն սպասում ե մի նիստրի դուրս գալուն: Դուռը բացվեց և ներս մտավ մոտ յերեսուն յերկու տարեկան մի զեղեցիկ տղամարդ: Կոմսը մոտեցավ ինձ սրտաբաց ու սիրալիր դեմքով: Յետ աշխատում եյի արտաքինվել և ուզում եյի ինձ ներկայացնել, բայց նա կանխեց ինձ: Մենք նստեցինք: Նրա զրույցը ազատ և սիրալիր, շուտով ցրեց իմ վայրենացած ամոթխածութունը: Յետ արդեն սկսել եյի մտնել իմ սովորական դրութեան մեջ, յերբ հանկարծ ծերս մտավ կոմսուհին և չփոթութունն ավելի սաստկացավ իմ մեջ: Իսկապես զեղեցիկուհի յեր նա: Կոմսն ինձ ներկայացրեց: Յետ ուզում եյի լինել ազատ, բայց վորքան ավելի եյի ուզում անբռնադրոսիկ թվալ, այնքան ավելի անշնորհք եյի դուրս ինձ: Նրանք, վորպեսզի ժամանակ տան ինձ կարգի ընկնել ու ընտելանալ նոր ծանոթութեանը, սկսեցին խոսել իրար հետ, վարվելով ինձ հետ վորպես բարի հարևանի և անտես ամենալավ ձևականութունները: Մինչ այդ յետ սկսեցի ման գալ յետ ու առաջ, դիտելով գրքերն ու նկարները: Նկարներից յետ շատ բան չեմ հասկանում, բայց մեկը գրավեց իմ ուշադրութունը: Նա պատկերում եր զվիցերական ինչ վոր մի տեսարան, բայց նրա մեջ ինձ զարմացրեց վոչ թե բնութայունը, այլ այն, վոր նկարը ծակված եր յերկու գնդակով՝ իրար վրա: «Մ'յ լավ նշան բունել»,—ասացի յետ, դիմելով կոմսին: «Այո,—պատասխանեց նա,—չառ զարմանալի նշան եր բրունել: Կամ դուք լավ նշան խիող եք», շարունակեց նա: «Բավական լավ», պատասխանեցի յետ, ուրախանալով, վոր խոսակցութունն անցավ ինձ լավ ծանոթ նյութին: «Յերեսուն քալի վրա խաղաթղթից չեմ վրիպի, հասկանալի յե, ծանոթ ատրճանակով»—«Ճիշտ,—ասաց կոմսուհին մեծ ուշադրութեամբ.— իսկ դու, բարեկամս, կարո՞ղ ես յերեսուն քալի վրա խիել խաղաթղթին»: «Յերեկից կփորձենք,—պատասխանեց կոմսը:— Գամանակին յետ վատ չեյի կրակում: Բայց ահա չորս տարի յե,

վոր ատրճանակ չեմ վերցրել ձեռքս»։ «Ո՛ր, — նկատեցի յես, — այդ դեպքում դրադ եմ գալիս, ձերդ պայծառափայլություն, վոր դուք քսան քայլի վրա ել չեք խփի խաղաթղթին. ատրճանակը պահանջում ե ամեն ոք մարդվել։ Այդ յես գիտեմ փորձով։ Մեր գնդում յես համարվում եյի ամենալավ նշան խորոզներից մեկը։ Մի անգամ աշնակես պատահեց, վոր մի ամբողջ ամիս ատրճանակ չվերցրի ձեռքս՝ իմոնք նորոգելու եյի տվել։ Յեմ ինչ եք կարծում, ձերդ պայծառափայլություն։ Առաջին անգամը, յերբ սկսեցի կրակել, քսանհինգ քայլի վրա չորս անգամ իրար յետեից վրիպեցի չլից։ Մեզ մոտ մի ուսումիստը՝ կար, սրա — խոս մարդ եր, կատակարան։ Նա այդտեղ եր ու ասաց ինձ՝ յերեւում ե, ախպերս, քո ձեռքը չի բարձրանում չլի վրա։ Չե, ձերդ պայծառափայլություն, չպետք ե արհամարհել այդ մարդանքները, թե չե, մեկ ել տեսար՝ վարժությունդ կորցրիր։ Լավադույն հրաձիգը, վորին յես առիթ եմ ունեցել հանդիպել, կրակում եր ամեն ոք, առնվազը յերեք անգամ ճաշից առաջ։ Դա նրա մոտ սովորություն եր դատել, ինչպես ողու բաժակը»։ Կոմսն աւ կոմսուհին ուրախ եյին, վոր յես սկսեցի խոսել։ «Իսկ նա ինչպես եր կրակում», — հարցրեց ինձ կոմսը։ «Այ թե ինչպես, ձերդ պայծառափայլություն. մեկ-մեկ, յերբ տեսնում եր մի ճանձ նստեց պատի վրա՝ դուք ծիծաղում եք, կոմսուհի։ Ասոված վկա, ճիշտ ե։ Յերբ տեսնում եր ճանձին, բղավում եր՝ Կուզկա, ատրճանակը։ Յեմ Կուզկան բերում եր լցրած ատրճանակը։ Նա չըրի, — տեսար ճանձին խրեց պատի մեջ»։ «Դա զարմանալի յե, — ասաց կոմսը, — իսկ նրա անունն ի՞նչ եր»։ «Սիրվիո, ձերդ պայծառափայլություն»։ «Սիրվիո՛, — բացականչեց կոմսը տեղից վեր ցատկելով, — դուք ճանաչում եյիք Սիրվիոյին»։ «Վո՞նց չեյի ճանաչում, ձերդ պայծառափայլություն, մենք նրա հետ մոտ ընկերներ եյինք։ Նա մեր գնդում ընդունված եր, ինչպես ընկեր տղա։ Բայց, ահա հինգ տարի յե, ինչ նրանից վոչ մի լուր չունեմ։ Ուրեմն, ձերդ պայծառափայլությունն ե՞լ ճանաչում եյինք նրան»։ «Ճանաչում եյի, լավ եյի ճանաչում։ Չե՞ր պատմում, արդյոք, նա ձեզ մի շատ տարրերնակ դեպքի մասին»։ «Այն ապտակը չե՞, արդյոք, ձերդ պայծառափայլություն, վոր նա ասացել եր պարահանդեսում ինչ-վոր

մի ստահակից» — «Իսկ ասե՞լ ե նա ձեզ այդ ստահակի անունը»։ «Վոչ, ձերդ պայծառափայլություն, չի ասել... Ախ, ձերդ պայծառափայլություն, — չարոնակեցի յես, գլխի ընկնելով իսկությանը, — ներեցե՛ք... յես չգիտեյի... այդ դուք չե՞ք, արդյոք...» — «Յես ինքս եմ պատասխանեց կոմսը չափազանց հուզված, — իսկ այս ծակված նկարը մեր վերջին հանդիպման հիշատակն ե»... — «Ա՛խ, սիրելիս, — ասաց կոմսուհին, — ի սեր ապտո՛ր, մի պատմիր, յես սարսափում եմ այդ պատմությունից»։ «Չե, — առարկեց կոմսը, — յես ամեն բան կպատմեմ։ Նա գիտի, թե յես ինչպես եմ վիրավորել նրա բարեկամին. դե, թող խմանա, թե Սիրվիոն ինչպես վրեժ առավ ինձանից»։ Կոմսը մոտ քաշեց ինձ համար մի բաղկաթուռ և յես վառ հետաքրքրությամբ լսեցի հետևյալ պատմությունը։

«Հինգ տարի սրանից առաջ յես ամուսնացա։ Առաջին ամիսը — մեղրամիսը — յես անցկացրի այստեղ՝ այս գյուղում։ Այս տանը յես պարտական եմ իմ կյանքի լավագույն բոլորները և ամենամանր հիշողություններից մեկը։

Մի անգամ յերեկոյան մենք բոլորս ման եյինք դալիս ձիով։ Կնոջս ձին ինչ-վոր համառեց։ Նա վախեցավ, սանձը տվեց ինձ ու վտռով դնաց տուն։ Յես ձիով անցա առաջ։ Բախում յես տեսա մի ճամբորդական սայրակ։ Ինձ ասացին, վոր իմ առանձնասենյակում նստած ե մի մարդ, վորը չի ուզեցել իր անունը տալ, այլ ուղղակի ասել ե, վոր ինքն ինձ հետ դործ ունի։ Յես մոտ այս սենյակը և մթության մեջ տեսա փոշոտված ու մորուքն յեկած մի մարդու։ Նա կանգնած եր այստեղ բուխարու մոտ։ Յես մոտեցա նրան, աշխատելով հիշել նրա դիմագծերը։ «Դու ինձ չըճանաչեցի՞ր, կոմս», ասաց նա դողդոջուն ձայնով։ «Սիրվիո, — բղավեցի յես, և, խոստովանում եմ, զգացի, թե ինչպես մազերս փշաքաղվեցին գլխիս։ «Այո, յես եմ, — չարոնակեց նա, — կրակելու հերթը իմն ե։ Յեկել եմ ատրճանակս պարպելու։ Պատրաստ ես արդյոք»։ Ատրճանակը դուրս եր ցցված նրա կողքի գրպանից։ Յես չափեցի տասներկու քայլ ու կանգնեցի այնտեղ անկյունում՝ խնդրելով նրան չուտ կրակել, քանի կինս չի վերադարձել։ Նա դանդաղում եր — նա կրակ ուզեց։ Մոմեր տվին։ Յես կողպեցի դռները, պատվիրեցի վոչ-վոքի ներս չթողնել, և նորից խնդրեցի նրան կրակել։ Նա հանեց ատրճանակն աւ նշան բռնեց։ Յես համբուր եյի վայրկյանները... յես մոտածում եյի

1 Խոսմիստը — հեծելավազի հրամանատար (գնդի մեջ կար 4—6 հեծելավազ)։

կնոջս մասին... Անցավ մի սոսկալի բոսք: Սիրվիոն ցած թողեց ձեռքը: «Յալում եմ, վոր ատրճանակը լեցված է վոչ կեռասի կորիզներով... Գնդակը ծանր է: Ինձ միշտ թվում է, թե մեր մեծամարտը մենամարտ չէ, այլ սպանություն՝ յես սոսկոր չեմ անգեհի վրա կրակել: Սկսեմք նորից: Վիճակ գցենք, թե մեզինց ով պիտի առաջ կրակի»: Գլուխս պտույտ եր դարձիս... Կարծեմ յես չեյի համաձայնվում... Վերջապես մենք ելի ատրճանակ լըցրինք: Փաթաթեցինք յերկու տոմս: Նա դրեց դրանք գլխարկի մեջ, վոր մի ժամանակ յես ծակել եյի գնդակով: Յես նորից հանեցի առաջին համարը: «Դու, կոմս, սատանայի բախտ ունես», ասաց նա քմծիծաղ տալով, վորը յերբեք չեմ մոռանա: Ձեմ հասկանում, թե ինչ եր կատարվում ինձ հետ, և ինչ ձեվով նա կառողացավ հարկադրել ինձ այդ անելու... բայց — յես կրակեցի ու խփեցի ա՛յ ես նկարին: (Կոմսը մատով ցույց տվեց գնդակով ծակված նկարը: Նրա դեմքը վառվում եր կրակի պես: Կոմսուհին ավելի դուռնատ եր, քան իր թաշկինակը. յես չկարողացա զսպել իմ բացականչությունը):

Յես կրակեցի, — չարոմանակեց կոմսը, — և փառք ասածս, վրիպեցի: Այդ ժամանակ Սիրվիոն... (այդ բոսքին նա, ճիշտ վոր, սարսափելի յեր) Սիրվիոն սկսեց նշան բռնել ինձ: Հանկարծ դուռը բացվեց, Մաշան ներս է վազում ու ճշարով ընկնում վիզս: Նրա ներկայությունը վերադարձրեց ինձ իմ ամբողջ զգաստությունը: «Սիրելիս, — ասաց նրան, — մի՞թե դու չես տեսնում, վոր մենք կատակ ենք անում: Այս ինչպե՞ս էս դու վախեցել, գնա մի բաժակ ջուր իմիր ու արի մեզ մոտ, յես կներկայացնեմ քեզ իմ հին բարեկամին ու ընկերոջը»: Մաշան դեռ չեր հավատում: «Ասացեք, ճի՞շտ է ասում ամուսինս, — ասաց նա դիմելով ահեղ Սիրվիոնին, — ձի՞շտ է, վոր դուք յերկտով ել կատակ եք անում»: «Նա միշտ ել կատակ է անում, կոմսուհի, — պատասխանեց նրան Սիրվիոն, — մի անգամ նա կատակով մի ապտակ խփեց ինձ, կատակով ծակեց իմ այս գլխարկը, կատակով հիմա վրիպեց ինձնից, հիմա յես ել ցանկանում եմ կատակ անել...» Այս խոսքին նա ուզում եր նշան բռնել ինձ... Մաշայի ներկայությունը: Մաշան ընկավ նրա վտարեթի: «Վե՛ր, կաց, Մաշա՛, ամոթ է, — բղավեցի յես կատաղաբար, — իսկ դուք, պարոն, դադարեցե՛ք յեք արդյոք ծաղրել խեղճ կնոջը: Կրակելո՛ւ յեք դուք, թե՞ չեք»: «Ձեմ կրակի, — պատասխանեց Սիրվիոն, —

յես դո՛հ եմ՝ յես տեսա քո շփոթմունքը, քո յերկյուղը, յես ստիպեցի քեզ կրակել ինձ վրա, դա ինձ հերիք է: Կհիչես դու ինձ: Հանձնում եմ քեզ քո խղճին»: Այստեղ նա ուզում եր դուրս գալ, բայց կանգ առավ դռան մեջ, նայեց իմ ծակած նկարին, կրակեց նրա վրա, գլխի մասնից նշան բռնելու, ու անհայտացավ: Կինս պառկել եր ուշադրաց: Մարդիկ չեյին համարձակվում կանգնեցնել նրան ու սարսափած նայում եյին նրան: Նա դուրս յեկավ պատշգամբ, կանչեց կառապանին ու դնաց, նախքան յես ժամանակ ունեցա ուշքի գալու»:

Կոմսը լռեց: Այդպիսով յես իմացա այն վիպակի վերջը, վորի սկիզբը մի ժամանակ այնպես չլսեցրել եր ինձ: Դրա հերոսի հետ յես այլևս չհանդիպեցի: Ասում են, վոր Սիրվիոն, Ալեքսանդր Իպսիլանտի¹ աստուածբության ժամանակ առաջնորդում եր ետերիստներին² ջոկատը և սպանվել եր Սկուլյանի³ մոտ տեղի ունեցած ճակատամարտերում:

Վ. 168-49



¹ Ալեքսանդր Իպսիլանտի — (1792—1828) — 1821 թվին Թուրքիայի դեմ տեղի ունեցած հունական ապստամբության առաջնորդներից մեկը:

² Ետերիստներ կամ գետերիստներ — հունական դադանի ընկերության անդամներ. պայքարում եյին հունաստանի անկախության համար:

³ Սկուլյան — ավան Բեսարաբիայում՝ Պրուտ գետի ափին: Արյունալի ճակատամարտում 29 հունիսի 1821 թ. հուլիսին գլխովին պարտված եյին մի քանի անգամ նրանց գերազանցող թուրքական ռեգիմենտի:

Բ ՈՒ Ք Ը

Նժույգներն են արշավում,
կոխոտում մն ձյունը խոր...
Մի տաճար և յերևում,
Կանգնած մի կողմ, մենավոր:

Հանկարծ շուրջը բուք ու ձյուն...
Յեվ թևերով շաչելով,
Մի աղավալ և սրտովում
Լայն սահանակի շուրջ լողոր:
Յեվ կռիւնն և ցավ դուժում,
Յեվ ձիւրն են սրարշավ
Հեռուն նայում, թափանցում,
Բարձրացնելով բաշը թափ...¹

ժուկովսկի²

1811 թվի վերջերին, մեզ համար արժանահիշատակ ժամանակաշրջանում իր Նենադադովո կալվածքում ապրում եր բարի Գավրիլա Գավրիլովիչ Ռ***-ն: Ամբողջ շրջանում նա հյուրասեր ու սրտաբաց մարդու համբավ եր վայելում: Հարևանները հաճախ դնում էին նրա մոտ ուտելու, խմելու, 5-ական կոպեկով բոստոն³ խաղալու նրա կնոջ հետ, իսկ միջանիսն ել նրա համար, վոր նային նրանց տասնյոթ ամյա որիորդին: Նա համարվում եր հարուստ հարսնացու և շատերն աչք ունեյին նրա վրա իրենց կամ իրենց վորդիների համար:

¹ Թարգմ. Հռ. Պողոսյանի:

² Վ. Ա. Ժուկովսկի (1783—1852) — ակնաբնական-ուսմանտիական ուղղության բանաստեղծ ու թարգմանիչ: Յերիտասարդ Պուշկինի գրական ուսուցիչներից մեկը: Բնականը վերցված է նրա «Սվետլանա» բալլադից:

³ Բոստոն (փաստոն) — հին թղթախաղ:

Մարիա Գավրիլովնան դաստիարակված եր Փրանսիական ուսմանների վրդով և, հետևապես, սիրահարված եր: Նրա ընտրած անձը մի աղքատ բանակային պրասպորչչիկ¹ եր, վոր արձակուրդով յեկել եր իր գյուղը: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր յերիտասարդը բոցավառվում եր նույնպիսի սիրով, և վոր նրա սիրածի ծնողները, նկատելով նրանց փոխադարձ հակումը, արգելել էին աղջկան մտածել անգամ նրա մասին, իսկ նրան ընդունում էին ավելի վատ, քան պաշտոնաթող առևանակային²:

Մեր սիրահարները նամակագրություն ունեյին և ամեն անգամ տեսնվում էին սոճու պուրակում կամ հին մատուռի մոտ: Այնտեղ նրանք յերգվում էին հավիտյան սիրելի իրար, դանդաղվում էին ճակատագրից և դանդաղան յենթագրություններ անում: Իրար նամակներ գրելով ու խոսակցելով այդ ձևով, նրանք (վոր միանգամայն բնական ե), հասան հետևյալ դատողությանը՝ յենթե մենք մեկս առանց մյուսի չնչել չենք կարող, իսկ դաժան ծնողների կամքը խոչընդոտ է հանդիսանում մեր յերջանկությանը, ապա չի կարելի արգելք, վոր մենք ապրենք առանց նրանց կամքի:

Հասկանալի յե, վոր այդ յերջանիկ միտքը նախ յերիտասարդ տղայի գլխում ծագեց, և վոր այն շատ դուր յեկավ Մարիա Գավրիլովնայի ուսմանտիկ յերևակայությանը:

Վրա հասավ ձմեռն ու զաղարեցրեց նրանց տեսակցությունները: Բայց դրա փոխարեն նամակագրությունն ավելի աշխուժացավ: Վլադիմիր Նիկոլաևիչը յուրաքանչյուր նամակում աղաչում եր նրան նոխրվել իրեն, պսակվել զաղամարար, թագնվել մի վորոշ ժամանակ, հետո ընկնել ծնողների վտար, վորոնք, ի հարկե, կղղացվեյին, վերջապես, սիրահարների հերոսական հաստատակամությունից ու դժբախտությունից և կասեն նրանց անպատճառ՝ «Յերեխայք, յեկեք մեր գիրիրը»:

Մարիա Գավրիլովնան յերկար տատանվում եր: Փախուստի բազմաթիվ ծրագրներից հրաժարվեց: Վերջապես նա համաձայնվեց: Նշանակված որը նա չափաի ընթերցեր ու պիտի հեռանար իր

¹ Ստորին սոլյախան առախման ցարական բանակում: Ծ. Թ.

² Առևանակալ (զառնգատել) — XVIII և XIX դարերի ստորին դատական հիմնադրությունների պաշտոնյա, մինչ XIX դարի 60-ական թվականների զատարանային ուսմանը:

սենյակը՝ գլխացավի պատրվակով: Նրան ծառայող աղջիկը մասնակցում էր դավադրությանը: Նրանք յերկուսով պիտի դուրս գային պարտեզ յետևի պատշգամբով, պարտեզի մյուս կողմում գտնեյին պատրաստ սահնակը, նստեյին նրա մեջ և զնային Նեռարադովոյից հինգ վերստի վրա գտնվող Ժադրինո գյուղը, ուղիղ յեկեղեցին, ուր արդեն Վլադիմիրը պիտի սպասեր նրանց: Վճռական ուժա նախորեյին Մարիա Գավրիլովնան ամբողջ գիշերը չքնեց: Նա պատրաստվում էր, կապկպում էր սպիտակեղենն ու հագուստները, մի յերկար նամակ գրեց մի ղզայուն օրիորդի, իր ընկերուհուն, մյուսն էլ իր ծնողներին: Նա հրաժեշտ էր տալիս նրանց ամենահուղիչ արտահայտություններով, բացատրում էր իր վարմունքը նրանով, վոր անդիմադրելի սիրտով է իրեն մղում և վերջացնում էր նրանով, վոր իր կյանքի ամենայերանելի բոլորն կհամարի այն բոլորն, յերբ կթույլատրվի իրեն ընկնել ամենաթանկագին ծնողների վտառը: Կնքելով յերկու բոցավառ սրտեր պատշաճ մակադրությամբ, նա լուսագեմին ընկավ անկողնի վրա ու ննջեց: Բայց այդտեղ էր սարսափելի յերազներն ամեն բոլոր արթնացնում էյին նրան: Մերթնրան թվում է, թե հենց այն բոլորյին, յերբ ինքը նստում է սահնակը, վորպեսզի զնա պտակվելու, հայրը կանգնեցնում է նրան, տանջալից արագությամբ քաշ տալիս ձյունի վրայով և գցում իր մութ, անտակ նկուղ... և նա ընկնում է գլխովայր սրտի անբացատրելի նվաղումով: Մերթ տեսնում էր Վլադիմիրին՝ խոտի վրա պառկած, գունատ, արյունւմա: Նա, մեռնելիս, ականջ ծակող ձայնով աղաչում էր շտապել իրեն հետ պտակվելու... Ուրիշ անճուռնի, անմխտ տեսիլներ էլ էյին անցնում նրա աչքի առաջ՝ մեկը մյուսի յետևից: Վերջապես, նա վեր կացավ, սովորականից ավելի գունատ և խկական գլխացավով: Հայրն և մայրը նկատեցին նրա անհանգստությունը: Նրանց քնքուշ հոգատարությունն ու անդադրում հարցումները ինչ է յեղել քեզ, Մաշա հիվանդ չե՞ս արդյոք, Մաշա, կտրատում էյին նրա սիրտը: Նա աշխատում էր հանգստացնել նրանց, ուրախ յերևալ, բայց չէր կարողանում: Յեկավ յերեկոն: Այն միտքը, թե նա վերջին օրն է անցկացնում իր ընտանիքի հետ, ճմլում էր նրա սիրտը: Նա հագվիվ կենդանի յեր: Գաղտնի հրաժեշտ էր տալիս իրեն շրջապատող բոլոր անձնակա-

բռնաբաններին, բոլոր առարկաներին: Ընթրիքը բերին: Նրա սիրտն ուժգին բարախեց: Դողդոջուն ձայնով հայտարարեց, վոր ինքն ընթրել չի ուզում, և սկսեց հրաժեստ տալ հորն ու մորը: Նրանք համբուրեցին նրան և, ըստ սովորութեան, որհանեցին: Նա քիչ մնաց լաց լինեք: Գալով իր սենյակը, ընկալ քաղկաթոռի մեջ ու արտասուքները հեղեղի պես հոսեցին: Ծառայող աղջիկը համոզում եր նրան հանգստանալ ու սրտապընդվել: Ամեն ինչ պատրաստ եր: Կես ժամից հետո Մաշան ընդմիջտ պիտի թողներ ծնողական տանը, իր սենյակը, խաղաղ կուտական կյանքը... Դրսում բուք եր: Քամին վռոնում եր, ծածկափեղկերը դողում եյին ու թխթխկում: Ամեն ինչ նրան սպառնալիք ու տխուր նախադուշակություն եր թվում: Ծուռով տանը բորբը հանդարտվեցին ու լռեցին: Մաշան վաթաթվեց շալով, հագավ տաք կապտը, վերցրեց իր արկղիկը ու դուրս յեկավ յետևի պատշգամբը: Աղախինը նրա յետևից տանում եր յերկու կապոց: Նրանք իջան այգին: Բուքը չեր դադարում: Քամին փչում եր նրանց հանդեպ, կարծես աշխատելով յետ պահել յերկտասարդ հանցագործին: Նրանք դժվարութեամբ հասան այդու ծայրը: Ճանապարհին սահնակն սպասում եր նրան: Զիբը, ցրտից նեղվելով իրենց տեղում չեյին կանգնում: Վլադիմիրի կառապանը լծախայտերի առջև չուր ու մուռ գալով դապում եր յեռանդուն ձիերին: Նա որիորդին աւ նրա աղախինն ողնեց նստել ու տեղաւորել կապոցներն ու արկղիկը, վերցրեց յերանանները և ձիերը սլացան: Հանձնարարելով որիորդին ճակատագրի խնամքին և կառապան Տերյոշկայի հմտութեանը՝ դառնալով դեպի մեր յերկտասարդ սիրահարը:

Ամբողջ որը վկադիմիրը չընկալուած յան մեջ եր: Առա-
վոտյան նա յեղով ժողովրդոյի քահանայի մօտ, հաղիվ հազ-
արամանավորվեց նրա հետ: Հետո զնաց վկաներ դռնելու հարե-
վան կարվածատերերից: Առաջինը, վորի մօտ յեկավ նա, պաշ-
տոնաթող քառասուն տարեկան կոռնեալ Դրավինը ուրախությամբ
համաձայնեց: Այդ արկածը, հավատացնում եր նա, հիշեցնում եր
նրան նախկին ժամանակներն ու հուսարական գիտությունները:
Նա համոզեց վկադիմիրին մնալ իր մօտ ճաշի և հավատացրեց

1 Գոռեա — Հեծեւազորային սպայական առաջին աստիճանը ցարսկական ժամանակում :

Վերջապես նա տեսավ, Վոր գնում և վաճ իր ուղած կողմը :
Վլադիմիրը կանգ առավ . սկսեց մտածել, մտաբերել, ծանր ու

2 Ուշադրե՛ք: — Ժի չարք ձիավոր զննելի կոչումը ցարական բանակում:

Կամաց-կամաց ծառերն սկսեցին նստրանալ և Վլադիմիրը դուրս յեկավ անտառից։ Ժադրինոն Հեր յերևում։ Պիտի վոբարդեն կես գիշեր լինեք։ Արտասուքները ցայտեցին նրա աչքերից։ Նա գնաց, հանձնելով իրեն բախտի կամքին։ Յեղանակը հանդարտվեց, ամպերը ցրվեցին, նրա առջև ընկած էր ճերմակ, արևածափ, գորգով ծածկված տափարակը։ Գիշերը բավական պարզ էր։ Նա տեսավ իր առջև Հորս կամ Հինգ տներից բաղ-կացած մի գյուղակ։ Վլադիմիրը դիմեց դեպի այդ գյուղակը։ Առաջին խրճիթի մոտ նա ցած թռավ սահակից, վաղեց դեպի լուսամուտն ու սկսեց բաղխել։ Մի քանի բո-պեյից հետո փայտյա ծածկափեղկը բարձրացավ և մի ծերունի դուրս հանեց իր ճերմակ մորուքը։ «Խոչ ես ուղում»։ — «Հեռու՞ յե արդյոք Ժադրինոն»։ — «Ա-սում ես, հեռու յե Ժադրինոն»։ — «Հա, հա հեռու՞ յե արդ-յոք»։ — «Հեռու չի, տասը փերստ հաղիվ լինի»։ Այս պատաս-

2 Ուշադրե՛ք: — Ժի չարք ձիավոր զննելի կոչումը ցարական բանակում:

խանի վրա Վլադիմիրը բռնեց դուռն ու մնաց անշարժ, ինչպես մահվան դատապարտված մի մարդ:

«Իսկ դու վո՞րդուց ես», շարունակեց ծերունին: Վլադիմիրը սիրա չունեւ հարցերին պատասխանելու: «Կարո՞ղ ես դու, ծերունի,— ասաց նա,— ձիեր ճարել ինձ համար մինչև Ժադրինո»: «Ինչ ձի կա վոր մեղնում», պատասխանեց դուռացին: «Դե, չե՞ս կարող, գոնե, մի ուղեկցող ճարել: Յես կվճարեմ ինչքան վոր ուզի»: «Սպասիր,— ասաց ծերունին,— հրես տղիս կուղարկեմ, թող քեզ ճանապարհ ցույց տա»: Վլադիմիրն սկսեց սպասել: Մի րոպե դեռ չէր անցել, նորից սկսեց բաղխել: Ծածկավեղիւր բարձացավ, մորուքը յերևաց: «Ի՞նչ ես ուզում»: «Դե, ի՞նչ յեղավ տղադ»: «Հրես դուրս կգա, վոտքերն ե հագնում: Ձլինի՞, մրսել ես, ներս արի, տաքացիր»: «Շնորհակալ եմ, շուտ արա տղիդ ուղարկիր»:

Դարպասի դռները ճռնչացին: Տղան դուրս յեկավ մահակը ձեռնն ու առաջ անցավ, մերթ ցույց տալով, մերթ փնտռելով ճանապարհը, վոր ծածկված եր ձյունի հյուսերով: «Ժամը քանի՞սն ե», հարցրեց նրան Վլադիմիրը: «Դե, չուտով լույսը պիտի բացվի», պատասխանեց յերիտասարդ գաղղացին: Վլադիմիրն արդեն վոչինչ չէր խոսում:

Աքաղաղները խոսում էին և արդեն լույս եր, յերբ նրանք հասան Ժադրինո: Յեկեղեցին փակ եր: Վլադիմիրը վճարեց ուղեկցողին ու դնաց դեպի քահանայի տունը: Բակում չկար նրա յեռածի սահանակը: Ինչպիսի լուր եր սպասում նրան:

Բայց վերադառնանք դեպի Նենարադովոյի բարի կալվածատերերն ու տեսնենք ինչ ե կատարվում նրանց մոտ:

Դե, վոչինչ:

Ծերունիներն արթնացան ու դուրս յեկան հյուրասենյակ, Գավրիլա Գավրիլովիչը թասակով ու բալկայի կուրտկայով, Պրասկովյա Պետրովնան բամբակի աստառով շափրոկ հագած: Բերին ինքնայեռ և Գավրիլա Գավրիլովիչը փոքրիկ աղախինն ուղարկեց իմանալու Մարիա Գավրիլովնայից, թե ինչպե՞ս ե նրա առողջութունը և ինչպե՞ս ե նա քնել: Աղախնիկը վերադարձավ, հայտնելով, թե որիորդը վատ ե քնել, բայց վա՛ր հիմա նա լավ ե, և թե նա հիմա կգա հյուրասենյակ: Իսկապե՞ս, զուրը բացվեց, և Մարիա Գավրիլովնան մոտեցավ հայրիկին ու մայրիկին, վոր բարեկ:

«Գլուխդ ինչպե՞ս ե, Մաշա», հարցրեց Գավրիլա Գավրիլովիչը: «Լավ ե, հայրիկ ջան», պատասխանեց Մաշան: «Դու, յերեւի, Մաշա, յերեկ շոքով ես ընկել», ասաց Պրասկովյա Պետրովնան: «Դուցե, մայրիկ ջան», պատասխանեց Մաշան:

Որն անցավ բարեհաջող, բայց գիշերը Մաշան հիվանդացավ: Մարդ ուղարկեցին քաղաք՝ բժշկի յետելից: Նա յեկավ յերեկոյան և հիվանդին գտավ գառանցանքների մեջ: Ուժգին տենդ եր սկսվել և խեղճ հիվանդը յերկու շաբաթ գտնվում եր գերեզմանի յեղրին:

Տանը վոչ-վոք չգլխեր նախատեսված փախուստի մասին: Նախ ինթաց ուր գրած նամակներն ալրված էին: Նրա աղախինը վոչ-վոքի վոչինչ չէր առում, վախենալով պարոնների բարկությունից: Քահանան, պաշտոնաթող կոոնետը, բեխավոր հողաչափը և փոքրիկ ուլմոր համեստ էին, և ի դուր չէր: Կառապան Տերյոչկան յերբեք վորեւեւ ավելորդ բան չէր առում, նույն փակ խմած Ժամանակ: Այսպիսով գաղտնիքը պահպանում էին ավելի քան վեց դավադիրներ: Բայց Մարիա Գավրիլովնան ինքը անդադար գառանցանքի մեջ արտահայտում եր իր գաղտնիքը: Սակայն նրա խոսքերն այնքան խելքից դուրս բաներ էին, վոր մայրը, վորը չէր հեռանում նրա անկողնից, կարողացավ հասկանալ նրանցից միայն այն, վոր իր աղջիկը մահու չափ սիրահարված եր Վլադիմիր Նիկալայիչի վրա, և վոր հավանաբար սերն եր հիվանդության պատճառը: Նա խորհուրդ արեց մարդու հետ, միքանի հարեանների հետ, և վերջապես միաձայն վորոշեցին, վոր, յերեւի, այդպե՛ս ե Մարիա Գավրիլովնայի ճակատագիրը, վոր նրա ճակատին ել այդ ե գրված, վոր աղքատությունն արատ չի, վոր ապրում ես վոչ թե հարուստության համար, այլ մարդու և այսպիսի այլ բաներ: Բարոյական առածները դարձանալի ոգտակար են լինում այն դեպքում, յերբ մենք մեղնից չառ քիչ բան կարող ենք հնարել մեզ արդարացնելու համար:

Մինչ այդ որիորդն սկսեց առողջանալ: Վլադիմիրը վաղուց չէր յերևում Գավրիլա Գավրիլովիչի տանը: Նա վախեցել եր ատվորական ընդունելությունից: Վորոշեցին ուղարկել նրա յետեւից ու հայտնել նրան անսպասելի բախտավորության մասին, թե՛ համաձայնություն են տալիս ամուսնության համար: Բայց վորքան մեծ յեղավ Նենարադովյան կալվածատերերի

զարմանքը, յերբ իրենց հրավերին ստացան նրանից կիսախելա-
դար մի նամակ: Նա հայտարարում էր, թե նրա վոտքն այլևս
յերբեք չի լինելու նրանց տանը, և խնդրում էր մոռանալ դըժ-
բախտի մասին, վորի միակ հույսը մնացել էր մահը: Մի քանի
օր անց նրանք իմացան, վոր Վլադիմիրը գնացել է բանակ: Դա
1812 թվին էր:

Յերկար չեյին համարձակվում հայտնել այդ մասին առող-
ջացող Մաշային: Նա յերբեք չէր հիշում Վլադիմիրի մասին:
Արդեն մի քանի ամիս հետո, գտնելով նրա անունը աչքի ըն-
կածների և Բորոդինոյի¹ կռվում ծանր վիրավորվածների թը-
վում, նա ուշադրաց յեղավ, և վախենում էյին թե նրա տենդը
նորից կկրկնվի: Սակայն, փառք ասածու, նրա ուշադրացու-
թյունը հետեանքներ չունեցավ:

Մի ուրիշ տխուրթյուն այցելեց նրան՝ Գավրիլա Գավրիլո-
վիչը վախճանվեց թողնելով նրան ամբողջ կալվածքի ժառանգը:
Բայց ժառանգությունը չէր մխիթարում Մաշային: Նա անկեղ-
ծորեն բաժանում էր խեղճ Պրասկովյա Պետրովնայի վիշտը,
յերգվում էր յերբեք չանջատվել նրանից: Նրանք յերկուսով և
հեռացան Նենարադովոյից, տխուր հիշողությունները վայրից,
ու գնացին ապրելու *** կալվածքը:

Փեսացուներն այդտեղ ևլ պտտվում էյին սիրուն աւ հա-
րուստ հարսնացույի շուրջը: Բայց նա վուշ-վուքի հույս անգամ
չէր տալիս: Մայրը յերբեմն համոզում էր նրան մի ընկեր ընտ-
րել իրեն համար: Մարիա Գավրիլովնան գլուխը թափ էր տա-
լիս ու ընկնում մտածմունքի մեջ: Վլադիմիրն աղքեն գոյու-
թյուն չունեւ՝ նա մեռավ Մոսկվայում, մինչև Փրանսիացիներ-
ը քաղաք մտնելը: Նրա հիշատակը սրբազան էր թվում Մաշա-
յին: Նա պահպանում էր այն բոլորը, վոր կարող էր հիշեցնել
նրան. այն գրքերը, վոր նա յերբեմն կարդացել էր, նրա նկար-
ները, նոտաներն ու վոտանավորները, վոր նա արտադրել էր
Մաշայի համար: Հարեանները, տեղեկանալով ամեն բանի մա-
սին, զարմանում էյին նրա հաստատակամությանը և հետաքր-
քությամբ սպասում էյին այն հերոսին, վորը վերջապես պիտի

Բորոդինո — գյուղ Մոսկովի քաղաքի մոտ, Մոսկվայի մարզում: Բո-
րոդինոյի դաշտում 1812 թ. 23 սեպտեմբեր, անգլի ունեցավ արյունալի ճակա-
տամարա նահանջող ուսական բանակի ու Փրանսիական կայսր Նապոլեոն
Առաջինի զորքերի միջև:

հաղթահարեր այս կուսական Արտեմիլի¹ տխուր հալածարմու-
թյունը:

Մինչ այդ պատերազմը փառավոր վախճան ունեցավ: Մեր
գնդերը վերադառնում էյին արտասահմանից: Ժողովուրդն ըն-
դառաջ գնաց նրանց: Յերաժշտությունը նվագում էր հաղթանա-
կով ձեռք բերված յերգերը «Vive Henri-Quatre»², տիրույ-
կան վալսեր և արիաներ «Ժոկոնդից»³: Սպաները, վոր գնացել
էյին արչավանքի գրեթե պատանի հասակներում, վերադառնում
էյին արդեն ռազմի ոգում առնականացած, կուրծքները խաչե-
րով ծածկված: Զինվորներն ուրախ խոսում էյին իրար հետ
ամեն բոլի իրենց խոսակցությանը խառնելով գերմաներեն ու
Փրանսերեն բառեր: Անմոռանալի⁴ մի ժամանակ: Փառքի և հըր-
ճվանքի ժամանակ: Վորքա՛ն ուժգին էր բարախում ուստի սիր-
տը հայրենիք բառը լսելիս: Վորքա՛ն քաղցր էյին տեսակցու-
թյան արտասուքները: Ի՛նչ համերաշխությամբ միացնում էյինք
մենք ժողովրդական հպարտության զգացմունքն ու սերը դեպի
թագավորը: Իսկ նրա համար ինչպիսի՛ բոլի յեր:

Կանա՛յք, վորքա՛ն անդուգական էյին ուս կանայք: Նրանց
սովորական սանուկթյունն անհայտացել էր: Նրանց հրճվանքն
խկապես վոր գմայլեցուցիչ էր, յերբ հանդիպելով հաղթողնե-
րին, կանչում էյին՝ ուռա՛,

և ողբ նետում գլխանցները

Ո՞վ այն ժամանակի սպաներից չի խոստովանում, վոր
ոուս կնոջն է նա պարտական իր լավագույն, ամենաթանկագին
վարձատրությամբ:

Այդ փառահեղ ժամանակում Մարիա Գավրիլովնան ապրում
էր մօր հետ *** նահանգում և չէր տեսնում, թե ինչպես են
յերկու մայրաքաղաքները տոնում զորքերի վերադարձը: Բայց

1 Արտեմիլա—Արտեմիլիա, Կարիական թագուհի (IV դար մինչ մեր
թվակ): Համբավ ձեռք բերեց հալածարմությամբ դեպի իր մեռած ամու-
սինը՝ Մովսիսը:

2 «Կեցցե՛ Հենրիս Զորքորդը»:

3 «Ժոկոնդ» — կոմիկական ոպերա «Ժոկոնդ կամ արեամներ վոբոնդ»
Նեկլոս Իգուարի: Այդ ոպերան հսկայական հաջողությամբ բեմադրվում էր
ոուս զորքերի կողմից դրամված Փարիզում 1814 թ.:

4 Ա. Մ. Գրիբոեդովի «Խելքից պատահա» («Горе от ума») կամեղիս-
յից՝ «Բղավում էյին մեր կանայք, ուռա՛, և ողբ նետում գլխանցները» (գոր-
ծող. 2, տեսիլ 5):

դավառներում ու գյուղերում ընդհանուր հրճմանը դուցե և ավելի ուժեղ եր: Սպայի հայտնվելն այս տեղերում նրա համար իսկական առնախմբություն եր և Ֆրակ հագած սիրահարն իրեն վատ եր դուռ նրա կողքին:

Մենք արդեն ասել ենք, վոր, չնայած իր սառնությունը, Մարիա Գավրիլովնան միշտ շրջապատված եր իր ձեռքը խնդրողներով: Բայց բոլորն ստիպված էին նահանջել, յերբ նրա դղյալում հայտնվեց վիրավորված հուսարական գնդապետ Բուրմինը՝ Գեորգիի չքանչանով և հետաքրքիր գումատուքյամբ, ինչպես ասում էին այդ տեղերի որիորդները: Նա մոտ ջրանվեց տարեկան եր: Նա արձակուրդ եր յեկել իր կարվածները, վոր կից էին Մարիա Գավրիլովնայի գյուղի հողերին: Մարիա Գավրիլովնան առանձին ուշադրության եր արժանացնում նրան: Նրա ներկայութամբ նա թողնում եր իր սովորական մտադրադությունը: Զի կարելի ասել, թե նա նրա հետ սեթևեթություն եր առնում, բայց բանաստեղծը, նկատելով նրա վարմունքը, կասեր՝

Se amor non e', che dunque?...¹

Բուրմինն, իսկապես, շատ լավ յերիտասարդ եր: Նա հենց այնպիսի խելք ուներ, վորը դուր ե գալիս կանանց՝ քաղաքավարության և դիտողության խելք, առանց վորեւե պահանջախնդրության և անհոգ ծաղրական: Նրա վերաբերմունքը դեպի Մարիա Գավրիլովնան շատ պարզ եր և աղատ: Բայց ինչ ել ասեր կամ աներ, նրա սիրտն ու նայվածքներն անընդհատ հետեւում էին որիորդին: Թվում եր, թե նա հանգիստ և համեստ բնավորություն ունի, բայց համբավն ասում եր, վոր յերբեմն նա սասկալի ստահակի մեկն ե յեղել և այդ բանը չեւ վնասում նրան, չեւ վրիժում Մարիա Գավրիլովնայի կարծիքը, վորը (ինչպես և բոլոր յերիտասարդ կանայք ընդհանրապես) բավականություններում եր այն չարաճճիությունները, վորոնք արտահայտություն են յեղել նրա համարձակ բնավորության ու նրա տաքարյունության:

Բայց ամենից ավելի շատ... (ավելի, քան նրա քնքշությունը, ավելի, քան դուրեկան խոսակցությունը, ավելի, քան հետաքրքիր գունատությունը, ավելի, քան կապած ձեռքը) յերի-

¹ «Յեթե դա սեր չի, հապա ի՞նչ ե»: Հռչակավոր իտալական բանաստեղծ Պետրարկայի (1304—1374) վտանավորից մի տող:

տասարդ հուսարի լուսկայացությունը ամենից ավելի յեր գրգռում նրա հետաքրքրությունն ու յերեակայությունը: Նա չեւ կարող չխոստովանել, վոր ինքը շատ ե դուր գալիս նրան՝ յերիտասարդ գնդապետին: Հավանաբար գնդապետն ել, իր խելքով ու փորձառությունամբ, կարող եր արդեն նկատել, վոր որիորդն իրեն տարբերում եր մյուսներից. իսկ ինչպե՞ս ե, վոր մինչև այժմ չի տեսել գնդապետին իր վտռերն ընկած և դեռ չի լսել նրա խոստովանությունները: Ի՞նչն եր զսպում նրան: Յերկչոտությունը, հպարտությունը, թե խորամանկ կնամուլի սեթևեթությունը: Այդ բանը նրա համար հանելուկ եր: Լավ մտածելով, նա վճռեց, վոր դրա միակ պատճառը յերկչոտությունն եր, և վորոչեց սիրտ տալ նրան իր առավել ուշադրությամբ և, նայած հանդամանքներին, նույնիսկ քնքշությամբ: Նա պատրաստում եր մի ամենից ավելի անսպասելի լուծում և անհամբերությունամբ սպասում եր ռոմանտիկ բացատրության բոլորին: Գաղտնիքը, ինչ տեսակի դադարիք ել լինի, միշտ ծանր ե կնոջ սրտի համար: Մաշայի ռադմական դործողություններն ունեցան ցանկալի հաջողություն. համենայն դեպս Բուրմինն ընկավ այնպիսի մի մտախոհության մեջ, և նրա սեւ աչքերն այնպես բորբոքված էին կանդ առնով Մարիա Գավրիլովնայի վրա, վոր վճռական բոլորեն կարծես մոտենում եր: Հարեանները խոսում էին հարսանիքի մասին, վորպես արդեն ավարտված մի գործի մասին, իսկ բարի Պրասկովյա Պետրովնան ուրախանում եր, վոր իր աղջկը, վերջապես, գտավ իրեն արժանի մի փեսացու:

Մի անգամ պառավը մենակ նստել եր ընդունարանում և դրան-պաշտանս¹ եր բացում, յերբ Բուրմինը մտավ տենյակ ու խելույն և յեթ հարցրեց Մարիա Գավրիլովնայի մասին, «Նա պարտեղումն ե, — պատասխանեց պառավը: — Գնացեք նրա մոտ, իսկ յես այստեղ ձեզ կսպասեմ»: Բուրմինը գնաց, իսկ պառավը խաչակնքեց յերեսն ու մտածեց՝ դուցե հենց այսօր բանը կվերջանա:

Բուրմինը գտավ Մարիա Գավրիլովնային լճակի մոտ, ուռնու տակ, գիրքը ձեռքին և սպիտակ զգեստը հագին — իսկա-

¹ Գրան-պաշտան (Ֆրանս. grande-patience — մեծ համբերություն) — պաշտանի մի տեսակն և — մի հոգու թղթախաղ, վորի ժամանակ թղթերը բացում են այնքան անգամ, մինչև վոր նրանք կգտավորվեն ձիւղ վարջված ձեռով:

կա՛ն ոտմանի հերոսուհի: Առաջին հարց ու փորձից հետո, Մարիա Գավրիլովնան դիտմամբ դադարեց պահպանել խոսակցութիւնը, ուժեղացնելով աչքալիսով փոխադարձ շփոթութիւնը, վորից կարելի կլինէր ազատվել դուրս միայն հանկարծակի և վճռական բացատրութեամբ: Այդպես էլ յեղավ. Բուրմինը, դժուար իր դրութեան դժվարութիւնը, հայտնեց, վոր վաղուց մի դեպք եր փնտռում բացել նրան իր սիրտը և պահանջեց մի բոպե ուշադրութիւն: Մարիա Գավրիլովնան ծածկեց դիրքը և աչքերը հռոնց դեմնին ի նշան համաձայնութեան:

«Յես ձեզ սիրում եմ, — ասաց Բուրմինը, — յես ձեզ սիրում եմ անզուտ սիրով...» (Մարիա Գավրիլովնան կարմրեց ու ափելի կախ գցեց դուռը): «Յես անզուտ վարվեցի, հարատակվելով սիրելի սովորութեան՝ տեսնել ու լսել ձեզ ամեն ուր...» (Մարիա Գավրիլովնան հիշեց St. Preux-ին առաջին նամակը): Հիմա արդեն ուշ է դիմադրել իմ ճակատագրին: Ձեր հիշատակը, ձեր անողորմական պատկերը այժմանից իմ կյանքի տանջանքն ու բերկրանքը կդառնան: Բայց ինձ մնում է դեռ կատարել մի ծանր պարտականութիւն, բացել ձեզ մի սարսափելի գաղտնիք և դնել մեր միջև անհաղթահարելի մի պատվար»... — «Այդ պատվարը միշտ դոյութիւն ունեւ, — ընդհատեց աշխուժութեամբ Մարիա Գավրիլովնան — յես յերբեք չեյի կարող ձեր կինը դառնալ...» — «Գիտեմ, — պատասխանեց Բուրմինը ցածր ձայնով, — գիտեմ, վոր յերբեմն դուք սիրում եյիք, բայց մահը և յերեք սարմա մողոր... Բարի, սիրելի Մարիա Գավրիլովնա, մի աշխատեք զրկել ինձ իմ վերջին միջոցառութիւնից. այն միտքը վոր դուք կհամաձայնեյիք ինձ բախտավորեցնել, յեթե միայն... Լոկեք, ի սեր աստծո, լոկեք: Դուք խոցում եք ինձ: Այո, յես գիտեմ, յես գրում եմ, վոր դուք իմը կլինեյիք, բայց, — յես ամենազգախտ արարածն եմ... յես ամուսնացած եմ»:

Մարիա Գավրիլովնան նայեց նրան դարձացած:

«Յես ամուսնացած եմ, — շարունակեց Բուրմինը: — Չորրորդ տարին է, վոր յես ամուսնացած եմ և չգիտեմ, թե ո՛վ է իմ կինը, և վորտեղ է նա, և կտեսնեմ արդո՞ք նրա հետ, յերբ և իցն»:

Սեն-Պրե — Ժ. Ժ. Ռուսսոյի հոգեկալոր «Նամակներով ոտման»-ի («Յուլիա կամ նոր ելուղ») հերոսը:

«Ի՛նչ եք ասում», — բացականչեց Մարիա Գավրիլովնան, — վորքան տարորինակ է այդ: Շարունակեցեք, յես հետո կպատմեմ... բայց շարունակեցեք, խնդրում եմ»:

«1812 թվի սկզբին, — ասաց Բուրմինը, — յես շտապում եյի Վիլնա, վորտեղ դառնում եր մեր գունդը: Գալով մի անգամ կայարան ուշ յերեկոյան յես պատվիրեցի շուտ լծել ձիերը, յերբ հանկարծ սարսափելի բուք վեր կացավ և թե վերակացուն, թե կառապանը խորհուրդ եյին տալիս սպասել: Յես լսեցի նրանց, բայց մի անհասկանալի անհանգստութիւն պատեց ինձ: Կարծես մեկն ինձ ուղղակի դրդում եր: Մինչ այդ բուքը չեր դադարում: Յես համբերեցի, նորից պատվիրեցի լծել ձիերը ու ճանապարհ ընկա հենց փոթորիկ ժամանակ: Կառապանի խելքին փչեց քշել գետակը, վոր պիտի կրճատեր մեր ճանապարհը յերեք վերստով: Այիերը թիփին ծածկել եր: Կառապանը չնկատեց այն տեղը, վորտեղից պիտի ընկներ ճանապարհի վրա, և այդպիսով մենք ընկանք մի անձանութ տեղ: Փոթորիկը չեր դադարում: Առջև մի կրակ յերեւաց և յես պատվիրեցի դնալ այն կողմը: Մենք մտանք մի դուռ: Փայտաշեն յեկեղեցում կրակ եր յերեւում: Յեկեղեցին բաց եր, ցանկապատի յետեւում մի քանի սահնակ կային: Գալիթում ման եյին դալիս մարդիկ: «Այստեղ յեկեք, այստեղ», — ըզպեցին մի քանի ձայներ: Յես հրամայեցի կառապանին մոտ քշել: «Ի սեր աստծո, այս ինչո՞ւ այսքան ուշացար, — ասաց մեկը, — հարսի ուշքը գնացել է, տերտերը չգիտե ի՛նչ անի, մենք արդեն ուղում եյինք յետ դառնալ: Դե, շուտ դուրս արի»: Յես անխոս դուրս թոս սահնակից ու մտա յեկեղեցին, վոր աղոտ լուսավորված եր յերկու թե յերեք մոմերով: Մի աղջիկ նստած եր նստարանի վրա, յեկեղեցու մուտք անկյուններից մեկում, մյուսը նրա քունքերն եր տրորում: «Փառք աստծո, — ասաց այդ վերջինը, — հաղիվ յեկաք: Քիչ մնաց սպանելիք որիորդին»: Ծերունի քահանայի մոտեցավ ինձ, հարցնելով՝ «Կհրամայեք սկսե՞ք»: «Սկսե՛ք, սկսե՛ք, տեր հայր», — պատասխանեցի յես ցրված: Աղջկան տեղից վեր կացին: Նա ինձ թվաց բավական լավիկը... Անհասկանալի, աններելի մի թեթիւ անմոտութիւն, յես կանգնեցի նրա կողքին գրակալի առաջ: Քահանայի շտապում եր: Յերեք տղամարդիկ և աղախինը պահում եյին հարսին և զբաղված եյին միայն նրանով: Մեզ պակեցին: «Համբուրվեցեք», — ասացին մեզ: Իմ

կինը դարձրեց զեպի ինձ իր գունատ դեմքը: Յես ուղղում եյի համբուրել նրան... Նա ճչաց՝ «Վայ, նա՛ չի, նա՛ չի» և վայել ընկավ ուշադնաց: Վկաներն ինձ վրա սեղեղեցին վախեցած աչքերնին: Յես չուռ յեկա, դուրս յեկա յեկեղեցուց առանց վորեն արգելքի, ինձ զցեցի սահնակի մեջ ու բղավեցի՝ «քչի՛ր»:

«Աստվա՛ծ իմ, — բացականչեց Մարիա Գալբրիելյան, — և դուք չգիտեք, թե ինչ յեղավ ձեր խեղճ կինը»:

«Չգիտեմ, — պատասխանեց Բուրմինը, — չգիտեմ թե ինչ ե այն գլուղի անունը, ուր յես պտակվեցի, չեմ հիշում, թե վոր կայարանից եմ գնացել: Այն ժամանակ յես այնքան քիչ կարևորություն եյի տալիս իմ հանցագործ չարածիւթյան, վոր յեկեղեցուց հեռանալով, քնեցի ու արթնացա մյուս օրն առավոտյան արդեն յերրորդ կայարանում: Այն ծառան, վոր ինձ հետ եր այդ ժամանակ, մեռավ արշավանքում, այնպես վոր յես հույս ել չուրեմ դռներու այն աղջկան, վորի հետ յես կատակ արի այդպես դաժանորեն և վորը հիմա այսքան դաժան կերպով վրեժ ե հանում ինձնից»:

«Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ, — ասաց Մարիա Գալբրիելյան, բռնելով նրա ձեռը: — Ուրեմն այդ դո՛ւք եյիք»:

Բուրմինը գունատվեց... և ընկավ նրա վրա քերքը:

ՓՈՍՏԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ

Կոլլեգիական ռեդիստրատոր¹

Փոստակայանի ղեկավար:

Իշխան Վյազմսկի²

Ո՞վ չի նշույնել փոստակայանի վերակացուներին, ո՞վ չի ընդհարվել նրանց հետ: Ո՞վ, բարկության բոսային, չի պահանջել նրանցից ճակատագրական գիրքը, վորպեսզի գրի նրա մեջ իր անօրոտ բողոքը կրած նեղությունների, կոպիտ վերաբերմունքի և անկարգությունների համար: Ո՞վ չի համարում նրանց մարդկային ցեղի ճիվաղներ, հավասար հանդուցյալ դատական գրագիրներին³, կամ առնվազն մուրմյան⁴ ավազակներին: Սակայն արդարացի լինենք, աշխատենք մտնել նրանց դրության մեջ ևս, կարող ե պատահել, վոր մենք ավելի ներողամիտ կլինենք նրանց նկատմամբ: Ի՞նչ ե փոստակայանի վերակացու: Տասնչորսերորդ կարգի մի կատարյալ նահատակ, վորին իր աստիճանը փրկում ե միայն ծեծից, և այն ել վրչ միշտ (շեմում եմ իմ ընթերցողների խղճին): Ի՞նչպիսի սրաշտոն ե այդ ղեկավարների պաշտոնը, ինչպես անվանում ե նրան կատակով իշխան Վյազմսկին: Արդյոք դա մի իսկական տաժանտիրի աշխատանք չի՞: Վրչ ցերեկը, վրչ ել գիշերը հանդիստ չունի: Չանձրարի ճանապարհորդության ժա-

¹ Կոլլեգիական ռեդիստրատոր (ցուցակագրիչ, մատենավար)—ստորին բաղադրական աստիճան ցարական Ռուսաստանում:

² Պ. Ա. Վյազմսկի—(1792—1878)—հայանի բանաստեղծ, Պուշկինի ժամանակակիցն ու բարեկամը:

³ Դատական գրագիր—հին ռուսական՝ պրոյաչիյ: Այդ գրագիրները բանասերկունքի ու կաշառակերների համբավ եյին վախելում:

⁴ Մուրմի անտառները—Ռկա գետի աջ ափին, հին ժամանակ հայտնի եյին իրենց ավազակներով:

մանակ կուտակւիլած ամբողջ մաղձը ճանապարհորդը թափում է վերակացուի գլխին: Յեղանակն անտանելի յե, ճանապարհը վառ է, կտապանը համառ է, ձիերը չեն քաշում—մեղավորը վերակացուն է: Մտնելով նրա աղքատիկ բնակարանը՝ ճանապարհորդը նայում է նրա վրա, վորպես իր թշնամու: Լսով է, յեթե նրան հաջողվի շուտ ազատվել անկոչ հյուրից, իսկ յեթե ձիեր չլինեն... Աստված իմ, ի՞նչ հայհոյանքներ, ի՞նչ սարսափներ կտեղան նրա գլխին: Անձրեին ու ցեխին առիպված է նա վազվզել դրսում: Բուք ու բորանին, սաստիկ սառնամանիքներին դուրս է գալիս նա նախասենյակ, վորպեսզի գեթ մի բոլակ հանգստանա վրդովված յեկելորի գոռգոռոցից ու հրնդումներից: Գալիս է մի գննելու, դողդոջուն վերակացուն տալիս է նրան վերջին յերկու յեռածին, դրանց թվում է սուրհանդակային ճեպընթացը: Գննելու դնում է առանց չնորհակալություն հայտնելու նրան: Մի հինգ բոլակ անց—նորից գնդդոց... և Ֆելդ—յեգեր¹ սեղանի վրա յե նստում իր ճանապարհի թուղթը... Ըմբռնեք մի փոքր այդ բոլորը, և գայրույթի փոխարեն մեր սիրտը կլցվի անկեղծ խղճահարությամբ: Նորից մի քանի խոսք. քան տարի շարունակ յես ման եմ յեկել Ռուսաստանում բոլոր ուղղություններով. դրեթե բոլոր փոստային ուղիներն ինձ հայտնի յեն. կտապանների մի քանի սերունդ են ինձ ծանոթ. քիչ վերակացուներ կան, վորոնց յես չեմ ճանաչում. քիչերը կան, վորոնց հետ յես դորձ չեմ ունեցել. իմ ճամբորդական դիտողությունների հետաքրքիր պաշարը հույս ունեմ հրատարակելու մոտ ժամանակներս. իսկ առայժմ պիտի ասեմ միայն, վոր փոստակայանների վերակացուների դասը սխալ կերպով է ներկայացված ընդհանուրի կարծիքին: Այդ այնքան ամբաստանված վերակացուներն ընդհանրապես խաղաղ մարդիկ են, բնությամբ ծառայակամ, համակցության հակում ունեն, համեստ են իրենց պահանջների մեջ դեպի պատվին ու հարգանքը և այնքան ել արծաթաեղ չեն: Նրանց զրույցներից (վորոնք շատ իզուր արհամարհում են պարոն ճամբորդները) կարելի յե շատ հետաքրքիր ու ուսանելի բաներ քաղել: Ինչ վերաբերում է ինձ, ապա, խոստովանում եմ, յես դե-

¹ Ֆելդ—յեգեր—ազգական սուրհանդակ, վորի միջոցով ուղարկվում են հատուկ կարեւորություն ունեցող հանձնարարություններ:

² Այդ թղթով նա իրավունք ուներ փոստի ձիեր պահանջելու:

րադասում եմ նրանց զրույցը 6-րդ կարգի վորեւ պաշտոնյայի զրույցից, վորը ճանապարհորդում է արքունական գործերով:

Հեղափոխմբ կարելի յե գլխի լինել, վոր յես մտերիմ ընկերներ ունեմ վերակացուների հարգելի դասից: Իսկապես, նրանցից մեկի մասին ունեցածս հիշողությունը թանկ է ինձ համար: Հանգամանքները մի ժամանակ մոտեցրին մեզ, և հենց նրա մասին է, վոր յես ցանկանում եմ հիմա զրուցել սիրալիք ընթերցողների հետ:

1816 թվին, մայիս ամսին, դեպքը բերավ, վոր յես անցնեմ *** յան նահանգի մի ճանապարհով, վոր այժմ չկա: Յես փոքր աստիճան ունեյի, ճամբորդում եյի փոխակառքերով և ուղեգրամ¹ եյի վճարում յերկու ձիու համար: Դրա հետեւանքով վերակացուներն ինձ վրա ուշք չեյին դարձնում և հաճախ յես կըրվով եյի վերցնում այն, ինչ իմ կարծիքով, իրավունք ունեյի պահանջելու: Լինելով յերիտասարդ և տաքարյուն՝ յես դայրանում եյի վերակացույի ստորության և փոքրողության վրա, յերբ այդ վերջինը ինձ համար պատրաստված ձիերը լծում եր վորեւ աստիճանավոր պարոնի կառքին: Միևնույն կերպ յերկար չեյի կարողանում վարժվել և այն բանին, յերբ խտաբարո ծառան ուշացնում եր իմ բաժինը նահանգապետի ճաշկերույթին: Այժմ թե այդ և թե մյուսը յես գտնում եմ բնական: Իսկապես, ինչ կլինեիր մեզ հետ, յեթե՝ աստիճանը աստիճանին հարգի ընդհանուրին հարմար կանոնի փոխարեն գործածության մեջ մտներ մի ուրիշը. որինակ՝ խելքը խելիմ հարգի կանոնը: Ի՞նչպիսի վեճեր կծագեյին, և ծառաներն ումից կսկսեյին բաժինները տալ: Բայց վերադառնում եմ իմ պատմվածքին:

Շուր որ եր... Կայանից յերեք վերստի վրա սկսեց անձրե մաղել և մի բոլակ անց՝ հորդ անձրեք թրջեց ինձ վոտքից գլուխ: Հասնելով կայարանը՝ իմ առաջին հոգսը յեղավ՝ վորքան կարելի յե շուտ փոխել շորերս, յերկրորդը՝ թեյ ուղել ինձ համար: «Եյ, Դուռնյա, — դոչեց վերակացուն, — ինքնայեղ դիր, և դնա հում սեր բեր»: Այդ խոսքերի վրա միջնապատի յետեից դուրս յեկավ տասնչորս տարեկան մի աղջիկ և վազեց նախասենյակ:

¹ Փոխակառքերով—պետական ձիերով փոխում եյին փոստակայաններում: (Ուղեգրամ—ընթացագրության գրամներ, վորոնք վճարվում եյին յուրաքանչյուր ձիու և վերստի հաշվով):

Նրա գեղեցկութիւնն ինձ ապշեցրեց: «Դա քո աղջիկն է», հարցրի յես վերակացուից:—«Այո, աղջիկս է,—ասաց նա դռնին քնատիրութեամբ.—վոր իմանաս ի՞նչ խելոք է, և ի՞նչ ժիր, հանգուցյալ մայրն է, վոր կա»: Այստեղ նա սկսեց արտադրել իմ ճանապարհի թուղթը. իսկ յես սկսեցի դիտել նրա համեստ, մաքուր ոթեմանը դարդարող նկարները: Նրանք պատկերացնում էին անսուսկ վորդու պատմութիւնը. առաջին նկարում թասակով և գիշերազգեստով մի պատկառելի ծերունի ճանապարհ է դնում անհանդիստ պատանուն, վորը շտապով ընդունում է նրա որհնութիւնը և փողերով լի քսակը: Մյուսում վառ գծերով նկարադրված է յերկատարդ մարդու անսուսկ վարքը. նա նստել է սեղանի մոտ, չընդարձակած կեղծ բարեկամներով և անամոթ կանանցով: Այնուհետև, անակացած պատանին, ցնցոտիներով ու յեռանկյունի գլխարկով, խող է արածեցնում և ճաշակում նրանց հետ միասին: Նրա գեմքի վրա պատկերված են խորը տխրութիւնն ու զղջումը: Վերջապես պատկերացված է նրա վերադարձը իր հոր մոտ: Բարի ծերունին նույն գիշերազգեստով և թասակով դուրս է վազում նրան դիմալորելու, անսուսկ վորդին ծունկ է չոքել. հեռվում խոհարարը մի գեր հորթ է մորթում, և ամառ յեղբայրը հարցնում է ծառաներին, թե ի՞նչ է այդ ուրախութեան պատճառը: Յուրաքանչյուր նկարի տակ յես կարդացի գեպքին պտտած գերմանական վոտանալորներ: Այդ բոլորը մինչև հիմա ել պահպանվել է իմ հիշողութեան մեջ, ինչպես և բալզամինով ծաղկամանները և խայտաբղետ վարադույրով մահճակալը, և մյուս առարկաները, վոր այն ժամանակ ինձ չընդարձակում էին:

Տեսնում եմ, ինչպես հիմա, իրեն՝ տանտիրոջը, հիսուն տարեկան, թարմ, առույզ մի մարդու, և նրա յերկար կանաչ սերթովն իր խոնացած ժապավեններով, վորոնց վրա յերեք մեղալ կար կայցրած:

Հաղիվ էյի յես հաշիվ տեսել իմ կատարանի հետ, յերբ Դունյան վերադարձավ ինքնայեռ ձեռքին: Փոքրիկ կոկետուհին առաջին իսկ հայացքից նկատել եր, թե ինչ տալովորութիւնն է թողել ինձ վրա: Նա խոնարհեց իր խոշոր յերկնազույն աչքերը: Յես սկսեցի խոսել նրա հետ, նա պատասխանում եր ինձ առանց քաշվելու, վորքեւ աշխարհ տեսած մի աղջիկ: Յես նրա հորը մի բաժակ փունջ առաջարկեցի: Դունյային մի գալաթ թեյ տվի և

մենք յերեքով սկսեցինք զրուցել, կարծես վաղուցվա ծանոթներ լինեյինք:

Ձիերը վաղուց պատրաստ էյին, իսկ յես դեռ ցանկութիւն չունեյի բաժանվելու վերակացուից ու նրա աղջկանից: Վերջապես, յես նրանց հրաժեշտ տվի: Հայրն ինձ բարի ճանապարհ մաղթեց, իսկ աղջիկը ճանապարհ դրեց մինչև կառքը: Նախասենյակում յես կանգ առա և թույլտվութիւն խնդրեցի համբուրելու նրան: Դունյան համաձայնեց... Շատ համբույրներ եմ տվել յես:

այն որվանից, յերբ զբաղվում եմ դրանով,

բայց վոչ մեկն այդքան յերկարատեւ, այդքան դուրեկան հիշողութիւն չի թողել իմ մեջ...

Անցավ մի քանի տարի և հանգամանքները բերին ինձ նույն ուղու վրա, նույն տեղերը: Յես հիշեցի ծերունի վերակացուի աղջկան և ուրախացա, յենթադրելով, վոր նորից կտեսնեմ նրան: Բայց, մտածում էյի, հին վերակացուն, գուցե և, փոխվել է, Դունյան ել յերկի արդեն մարդու յե գնացել: Թե մեկի և թե մյուսի մահվան միտքը նույնպես անցավ գլխովս, և յես մոտենում էյի կայանին տխուր նախազգացումներով: Ձիերը կանգ առան փոստի տեսիլի առջև: Մտնելով սենյակ, յես իսկույն ճանաչեցի անսուսկ վորդու պատմութիւնը պատկերող նկարները: Սեղանն ու մահճակալը կանգնած էյին առաջվա տեղերում: Բայց լուսամուտներում արդեն ծաղիկներ չկային և շուրջն ամեն բան վկայում եր խորխուրթյան ու անտարբերութեան մասին: Վերակացուն քնած եր քուրքի տակ: Իմ գալն արթնացրեց նրան, նա բարձրացավ տեղից... Դա իսկապես Սեմեոն Վիրինն եր: Բայց ի՞նչպես եր նա ծերացել: Մինչև նա կալատրաստվեր արտադրելու իմ ճանապարհի թուղթը, յես նայում էյի նրա ճերմակ մազերին, վաղուց չածիլված յերեսի խոր կնճիռներին, կորացած մեջքին— և դարձանք ինձ պատել եր, թե յիշեք կամ չորս տարին ի՞նչպես կարող էյին առույզ մարդուն դարձնել մի թույլ ծերունի: «Ճանաչո՞ւմ ես, արդյոք, դու ինձ,—հարցրի յես նրան,—մենք վաղուցվա ծանոթներ ենք»: «Կարող ե պատահել,—մոռյլ պատասխանեց նա,—այս ճանապարհը մեծ է, շատ անցվորներ են յեղել ինձ մոտ»:—«Առողջ ե արդյոք, քո Դունյան»,—չարունակեցի յես: Ծերունին եթերը կիսեց: «Եհ, աստված գիտե», պատաս-

խանեց նա:— «Յերեւում ե՛մ մարդո՞ւ յե՛ գնացել», ասացի յես: Ծերունին ձևացրեց, իբր թե չլսեց իմ հարցը և շարունակեց շշուկով կարդալ իմ ճանապարհի թուղթը: Յես դադարեցի հարցեր ասլ և պատվիրեցի թեյ պատրաստել: Հետաքրքրութունն սկսել եր ինձ անհանգստացնել, և յես հուշս ունեյի, վոր փունջը կբացի վաղեմի ծանոթիս լեզուն:

Յես չսխալվեցի, ծերունին չհրաժարվեց իմ առաջարկած բաժակից: Յես նկատեցի, վոր ուժը ցրեց նրա մռայլութիւնը: Յերկրորդ բաժակի հետ նա լեզուն բացեց՝ հիշեց, կամ ձևացրեց իբր թե հիշեց ինձ և յես նրանից իմացա յեղեւութիւնը, վորն այն ժամանակ ինձ խիստ հետաքրքրեց ու հուզեց:

«Դուք, ուրեմն, ճանաչո՞ւմ եյիք իմ Դունյային,— սկսեց նա:— Յե՛վ ո՞վ չեր ճանաչում նրան: Ա՛խ, Դունյա, Դունյա, ինչ աղջիկ եր իմ աղջիկը: Ո՛վ վոր անց եր կենում ետեղով, բոլորն ել գովում եյին, մեկը չկար, վոր նրա վատն ասեր: Տիկիները նվերներ եյին տալիս նրան—վորը մի թաշկինակ, վորն ել ականջողեր: Պարոն ճամբորդները գլտամբ կանդ եյին առում, իբր թե ճաշելու կամ ընթերլու, բայց խկապես հենց նրա համար, վոր մի քիչ յերկար նայեյին նրան: Պատահում եր, վոր մի պարոն, վորքան ել բարկացած լիներ, նրա մոտ խաղաղվում եր ու վաղորմածաբար խոսում հետս: Կհավատա՞ք, արդո՞ք, պարոն, սուհանդակները, Փերը—յեղերները կես ժամի չափ խոսում եյին նրա հետ: Տունը նրանով եր շեն, հովաքել եր պետք, մի բան պատրաստել եր պետք, ամեն ինչի հասնում եր: Իսկ յես ել, հիմար ծերուկս, նայելով չեյի կշտանում, ուրախութիւնից չգիտեյի ինչ անեմ: Ի՞նչքան եյի սիրում յես իմ Դունյային, ի՞նչքան եյի փայլաւոյում իմ դավակին, ինչպես եր ապրում նա ինձ մոտ: Բայց չե, փորձանքից պրծում չկա, ինչ լինելու յե, պիտի լինի»: Այստեղ նա սկսեց մանրամասն պատմել ինձ իր ցավը:

Յերեք տարի դրանից առաջ, ձմեռվա մի յերեկո, յերբ վերակացուն մի նոր գիրք եր գծում, և նրա աղջիկը միջնապատի յետևում իր համար չոր եր կարում, մի յետածի յեկավ, և ճամբորդը չերքեցի գլխարկով, զինվորական վերարկույով, շալով փաթաթված, սենյակ մտավ, պահանջելով ձիեր: Բոլոր ձիերը լծել տարել եյին: Այդ լուրն ստանալով ճամբորդն ուղեց մի ձայնը և մտրակը բարձրացնել: Բայց Դունյան, սովոր լինելով

նման տեսարանների, դուրս վաղեց միջնապատի յետևից ու սիրալիր դիմեց անցորդին հարց տալով՝ չի բարեհաճի արդո՞ք նա մի բան ուտել: Դունյայի յերեւոյն իր սովորական ներդործութիւնն ունեցավ: Անցորդի բարկութիւնն անցավ: Նա համաձայնեց սպասել ձիերին և ընթերիք պատվիրեց իր համար: Հանելով թաց, բրդոտ գդակը, արձակելով շալն ու գցելով վերայից վերարկուն, անցորդը ներկայացավ իբրեւ յերիտասարդ, բարեկազմ, սե բեխերով մի հուսար: Նա տեղավորվեց վերակացունի մոտ, սկսեց ուրախ զրուցել նրա և աղջկա հետ: Ընթերիքը բերին: Մինչ այդ ձիերը յեկան և, վերակացուն հրամայեց, վոր խսկուն, առանց կերակրելու լծեն անցորդի կառքին: Բայց, ներս մտնելով, նա տեսավ, վոր յերիտասարդը գրեթե ուշքը կորցրած պառկել և նստարանին. նա իրեն վատ եր զգում, գրելու ցավում եր, հնար չկար դնալու... Ի՞նչ աներ: Վերակացուն գիշեց նրան իր մահճակալը, և այսպես վորոշեցին, վոր յեթե հիվանդը չլավանար, մյուս որն առավոտյան մարդ պիտի ուղարկեյին Ս... քաղաքը բժշկի յետևից:

Մյուս որը հուսարն իրեն ավելի վատ եր զգում: Նրա ծառայողը ձիով դնաց քաղաք՝ բժշկին բերելու: Դունյան կապեց հուսարի գլուխը քացախի մեջ թրջված թաշկինակով ու կարը ձեռին նստեց նրա մահճակալի մոտ: Հիվանդը վերակացունի ներկայութեամբ տնքտնքում եր ու գրեթե վոչ մի խոսք չեր ասում, սակայն յերկու դավաթ սուրճ խմեց, ու տնքտնքալով իրեն ճաշ պատվիրեց: Դունյան նրանից չեր հեռանում: Նա անընդհատ խմել եր ուգում և Դունյան դավաթով տալիս եր նրան իր պատրաստած ոչարակից: Հիվանդը թրջում եր շրթունքները, և ամեն անգամ, վերադարձնելով դավաթը, ի նշան շնորհակալութեան իր թույլ ձեռքով սեղմում եր Դունյուշկայի ձեռքը: Ծաթյան իր թույլ ձեռքով սեղմում եր շրթունքները, խոսեց չին յեկավ բժիշկը: Նա շոշափեց հիվանդի զարկերակը, խոսեց նրա հետ գերմաներեն լեզվով և ուտերեն լեզվով հայտնեց, վոր նրան միայն հանգստութիւն և հարկավոր և մի յերկու որից հետո նա կարող ե արդեն ճանապարհ ընկնել: Հուսարը նրան քսան հինգ ուտրի տվեց այցելութեան համար, հրավիրեց նրան ճաշի: Բժիշկը համաձայնեց: Յերկուով ել ուտում եյին մեծ ախորժակով, խմեցին մի շիշ գինի և բաժանվեցին իրարից շատ Գոհ:

Անցավ ելի մի որ, և հուսարը բոլորովին աչխութացավ: Նա

չափազանց ուրախ եր, անդադար կատակ եր անում մեկ Դու-
նյայի, մեկ վերակացույի հետ: Յերգեր եր չվճարեցում, խո-
սակցում եր անցորդներին հետ, գրում եր նրանց ուղեգրերը
փոստային գրքում և բարի վերակացուն այնպես սիրեց նրան,
վոր յերրորդ առափնոյան արդեն նրա համար դժվար եր բա-
ժանվել իր սիրալիւր կենսութիւն: Որը կիրաւի յեր: Դունյան պատ-
րաստվում եր յեկեղեցի գնալ: Հուսարի կառքը պատրաստ եր:
Նա մնաս բարով ասաց վերակացույին, առատ վարձատրելով
նրան այդտեղ կենալու և հյուրասիրութեան համար: մնաս բա-
րե ասաց նաև Դունյային և առաջարկեց հասցնել նրան յեկեղե-
ցի, վորը գտնվում եր գյուղի ծայրին: Դունյան կանգնած եր
տարակուսանքի մեջ... «Ել ինչ ես վարենում,—ասաց՝ նրան
հայրը,—դե հո նորին բարձր բարեծննդութիւնը դայլ չի, չի՛
ուտի քեզ, գնա մինչև յեկեղեցին»: Դունյան կառք նստեց՝ հու-
սարի կողքին, ծառան բռնեց իր տեղը, կառապանը սուլեց ու
ձիերը վարեցին:

Խեղճ վերակացուն չեր հասկանում, թե ինչպես կարող եր
նա ինքը թույլ տալ Դունյային գնալ հուսարի հետ, ի՛նչպես եր
նա կուրացել և ո՛ւր եր նրա խելքն այն ժամանակ: Չանցավ մի
կես ժամ, յերբ նրա սիրտն սկսեց նվալ, նվալ ու անհանգստու-
թիւնը պատեց նրան այն աստիճանի, վոր նա ել չկարողացավ
սպասել ու ինքը գնաց յեկեղեցի: Մտանալով յեկեղեցուն, նա
տեսավ, վոր ժողովուրդն արդեն սուն և գնում, իսկ Դունյան վոչ
յեկեղեցու բակումն եր, վոչ ել դռանը: Նա շտապով մտնով յե-
կեղեցի. քահանան իջնում եր սեղանից: Տիրացուն մոմերն եր
հանգցնում, յերկու սրտով դեռ աղոթում եյին անկյունում:
Բայց Դունյան յեկեղեցում չեր: Խեղճ ծերունին հաղիվ սիրտ
արեց հարցնել տիրացույին՝ յեղե՞լ և արդո՞ք իր աղջիկը ժա-
մերգութեանը: Տիրացուն պատասխանեց, վոր չի յեղել: Վերա-
կացուն գնաց սուն վոչ մեռած և վոչ կենդանի: Մի հույս եր
մնացել նրանում՝ Դունյան, քահանայութեան անելով գուցե ուղե-
ցել և գնալ մինչև հետևյալ կայարանը, վորտեղ ապրում եր նը-
րա կնքամայրը: Տանջալից հուզմունքով սպասում եր նա յեռա-
ծիւ վերադառնալուն, վորով գնացել եր աղջիկը: Կառապանը
չեր վերադառնում: Վերջապես յերեկոյան դեմ նա յեկավ մե-
նակ և հարբած, բերելով մի սպանիչ լուր՝ «Դունյան մյուս կա-
յարանից չարունակեց ճանապարհը հուսարի հետ»:

Ծերունին չկարողացավ տանել իր դժբախտութիւնը: Նա
խկույն ևեթ պառկեց նույն անկողնում, վորտեղ նախորդ օրը
պառկել եր յերիտասարդ խաբեբան: Հիմա վերակացուն, ծանր
ու թեթև անելով բոլոր հանգամանքները, գլխի յեր ընկնում,
վոր հիվանդութիւնը չինձու յեր: Խեղճն ընկավ սաստիկ տեն-
դի մեջ: Նրան տարան Ս... , իսկ նրա տեղը ժամանակավորապես
նշանակեցին մի ուրիշին: Նույն բժիշկը, վոր յեկել եր հուսարի
մոտ, բժշկում եր և նրան: Նա հալատացրեց վերակացույին,
վոր յերիտասարդը բոլորովին առողջ եր, և վոր դեռ այն ժա-
մանակ գլխի յեր ընկնում նրա չարամիտ մտադրութեան մասին,
բայց բան չասաց, վախենալով նրա մտրակից: Ծի՞շտ եր ասում
գերմանացին, թե՞ ուզում եր միայն հպարտանալ իր հեռատե-
սութեամբ, բայց դրանով նա բոլորովին չսփոփեց խեղճ հիվան-
դին: Հաղիվ եր վերակացուն լավացել հիվանդութիւնից, յերբ
Ս...-ի փոստապետից արձակուրդ վերցրեց յերկու ամսով և,
առանց մեկին մի խոսք ասելու իր մտադրութեան մասին, վոտ-
քով ճանապարհ ընկավ աղջկա յետեից: Ուղեգրից նա գիտեր,
վոր ոռոմիստը Մինսկին գնում եր Սմոլենսկից Պետերբուրգ:
Նրան տանող կառապանը պատմում եր, վոր վողջ ճանապարհին
Դունյան լաց եր լինում, չնայած թվում եր, թե գնում եր իր
ցանկութեամբ: «Գուցե,—մտածում եր վերակացուն,—սուն կրե-
րեմ յես իմ մոլորված դառնուկին»: Այդ մտքով յեկավ նա Պե-
տերբուրգ, կանգ առավ Իզմայիլովյան դնդում, մի պաշտոնա-
թող յենթասպայի՞, իր հին ծառայակցի մոտ, և սկսեց իր վորո-
նումները: Շուտով նա իմացավ, վոր ոռոմիստը Մինսկին Պե-
տերբուրգումն և և ապրում և Դեմուտյան պանդոկում: Վերակա-
ցուն վորոչեց ներկայանալ նրան:

Առափնոյան վաղ յեկավ նա նրա նախասենյակը և խնդրեց
զեկուցել նորին բարձր բարեծննդութեանը, վոր մի հին գինիւր
ուզում և տեսնվել նրա հետ: Զինվորական սպասավորը, մաք-
րելով կաղապարի վրա հազցրած կոշիկը, հայտաբարեց, վոր
պարոնը ննջում և և ժամը տասնմեկից չուտ վոչ վոքի չի ըն-

1 Յենթասպա — ուստեր-օֆիցեր — ավագ ստորին աստիճան (գինիւրա-
կան) Մ. Թ.:

2 Դեմուտյան պանդոկ — այն ժամանակի հայտնի հյուրանոցը Պետերբուր-
գում: Դեմուտյան պանդոկում միշտ կանգ եր առնում նաև ինքը Պուշկինը:

դուռնում: Վերակացուն դնաց և վերադարձավ վորոշված ժամին: Մինակին ինքը դուռն յեկավ նրա առաջ խալաթով, գլխին կարմիր սկուֆյա՝ դրած: «Ինչ ե, ախպերս, քեզ հարկավոր», — հարցրեց նա: Մերոնուս սիրտը տակն ու վրա յեղավ, աչքերին արտասուքներ յերեացին, և նա դողդոջուն ձայնով արտասանեց միայն՝ «Ձերդ բարձր բարեծննդութուն: Ենպես մի աստվածա՝ լին վորոքութուն արեք...»: Մինակին նայեց նրան արագ, բռնակեց, բռնեց նրա ձեռքից, տարավ առանձնատանյակ ու փակեց դուռն իր յետևից: «Ձերդ բարեծննդութուն, — չարունակեց ծերունին, — բռնից ընկածը — կորած ե, յետ տվեք ինձ գոնե իմ խեղճ Դունյային: Չե՞ վոր դուք զվարճացել եք նրանով ձեր ուղածի պես, դե գոնե կորստի մի մատնեք նրան գուր տեղը»: «Ինչ յեղել ե, յեղել, — ասաց յերիտասարդը խիտ չփոթության մեջ, — մեղաւոր եմ քո առաջ և ուրախ եմ քեզնից ներողութուն խնդրելու, բայց մի կարծիր, վոր յես կարող եմ Դունյային թողնել, նա բախտավոր կլինի, ազնիւ խոսք եմ տալիս քեզ: Ինչի՞դ ե պետք նա: Նա ինձ օրրում ե: Նա արդեն ձեռ ե քաշել իր առաջվա դրութիւնից: Վոչ դու, վոչ ել նա — ել չեք մոռանա այն, ինչ պատահել ե»: Հետո, ինչ վոր բան կոխելով նրա թևքի մեջ, նա բացեց դուռը, և վերակացուն, ինքն ել չիմանալով թե ինչպես, իրեն տեսաւ փողոցում:

Յերկար կանգնած եր նա անշարժ, վերջապես տեսաւ իր թևքի ծալքերի մեջ մի փաթեթ թուղթ: Նա հանեց այդ թղթերն ու բացեց մի քանի հինգ և տասը ռուբլիանոց ծառած թղթադրամներ: Նորից արտասուքներ յերեացին նրա աչքերին, դայրույթի արտասուքներ: Նա թղթերը ձեռքի մեջ գնդեց, զցեց դետին, տրորեց կրունկով ու գնաց... Սնցնելով մի քանի քայլ, նա կանգ առավ, միտք արեց... և վերադարձավ... բայց թղթադրամներն արդեն չկային: Լավ հազնված մի յերիտասարդ, տեսնելով նրան, մոտ վազեց մի կտուքի, նստեց շտապով ու բռնակեց՝ «քչի»... Վերակացուն չհետապնդեց նրան: Նա վորոշեց գնալ տուն, դետի իր կայանը, բայց սկզբում ուղղում եր գոնե մի անգամ ել տեսնել իր խեղճ Դունյային: Դուռ համար մի յերկու օրից հետո վերադարձավ նա Մինակու մոտ: Բայց գլխուրդա՝ կան սպասաւորը ասաց նրան խստութեամբ, վոր պարոնը վոչվոր

քի չի ընդունում, կուրծքը դեմ անելով դուռն հանեց նրան նախասենյակից ու դուռը չրիկացրեց նրա քիթ տակ:

Այդ նույն օրը յերեկոյան գնում եր նա Լիտեյնի փողոցով, Բուր վշտացյալների յեկեղեցում մաղթանք անելուց հետո: Հանկարծ նրա առջևով սլացավ մի չքեղ յեռանդակ և վերակացուն ճանաչեց Մինակուն: Յետանդակը կանգնեց մի յեռահարկ տան առաջ, ուղիղ մուտքի դեմ և հուսարը վազեց դետի պատշգամա՝ բը: Մի բախտավոր միտք ծագեց վերակացույի գլխում: Նա յետ դարձավ ու հավասարվելով կառապանին՝ «Ես ո՞ւմ ձին ե, ախպերս, — հարցրեց նա, — Մինակունը չի, արդե՞ք»: «Ճիշտ այդպես ե, — պատասխանեց կառապանը, — իսկ քո ինչի՞ն ե պետք»: «Այ թե ինչ՝ քո պարոնը պատվիրել ե ինձ մի դրութիւն տանել նրա Դունյային, իսկ յես ել մոռացել եմ, վո՞րտեղ ե սպրում նրա Դունյան»: «Այ, հենց ետեղ, յերկրորդ հարկում: Ուշացել ես դու, ախպեր ջան, քո գրութիւնով: Հիմա արդեն ինքը նրա մոտն ե»: «Վնաս չկա, — առարկեց վերակացուն սրտի անբացատրելի հուզումով, — չնորհակալ եմ, վոր գլխի դցեցիր ինձ, իսկ յես ինչ հարկն ե կանեմ»: Յեւ նա սանդուխներով բարձրացավ վեր:

Դուռը փակ եր: Նա զանգահարեց, անցավ մի քանի վայրկյան՝ նրա համար ծանր սպասողական դրութիւն մեջ: Բանալին դնդաց, դուռը բաց արին: «Այտն՞դ ե կենում Ալդուտյա Սեմյոնովնան», — հարցրեց նա: «Ետեղ ե, — պատասխանեց յերիտասարդ աղախինը, — ինչի՞դ ե հարկավոր նա»: Վերակացուն առանց պատասխանելու մտաւ դահլիճ: «Ձի՛ կարելի, չի՛ կարելի, — գոչեց նրա յետևից աղախինը. — Ալդուտյա Սեմյոնովնայի մոտ հյուր կա»: Բայց վերակացուն առանց ուշք դարձնելու գնում եր առաջ: Յերկու առաջին սենյակները մութ էլին, յերրորդում լույս կար: Նա մոտեցավ բաց արած դռանն ու կանգ առավ: Հիանալի կահավորված սենյակում նստած եր Մինակին մտքի մեջ ընկած: Դունյան, մոտայի ամբողջ շաքուղութեամբ հաղնված՝ նստած եր նրա բազկաթոռի արմունկին, վորպես մի ձիավարուհի իր անզլեական թամբի վրա: Նա քնքաբար նայում եր Մինակուն, նրա սե խոսողները փաթաթելով իր սրտը մատնեքին: Խեղճ վերակացու: Յերբեք իր աղջկիկը նրան այդքան դեղեցիկ չեր թվացել: Նա աղամա տարվեց նրա տեսքով: «Ո՞վ կանտեղ», — հարցրեց աղջկիկը, առանց գլուխը բարձրացնելու: Նա

լուսւ եր: Պատասխան չստանալով, Դունյան բարձրացրեց դը-
լուսը... և ճշարով ընկավ գորգի վրա: Վախեցած Մինսկին նետ-
վեց նրան բարձրացնելու և, հանկարծ, տեսնելով դռները մեջ
ծեր վերակացույին, թողեց Դունյային և մոտեցավ նրան, բար-
կությունից դողալով: «Ի՞նչ ես ուզում, — ասաց նա վերակացու-
յին, — ատամները սեղմած, — ի՞նչ ես ամեն տեղ հետևում ինձ
ավագակի պես: Չլինի՞ ուզում ես մորթել ինձ: Կորի՛ր աշտե-
ղից», — և ուժեղ ձեռքով ծերունու ոձիքից բռնած, հրեց նրան
գեպի սանդուխքը:

Ծերունին յեկավ իր բնակարանը: Նրա բարեկամը խորհուրդ
եր տալիս դանդաղեցրել: Բայց վերակացուն մտածեց, ձեռք թափ
տվեց և վորոշեց ձեռք քաշել: Յերկու ուրից հետո Պետերբուրգից
ուղևորվեց նա յետ գեպի իր կայանը և նորից անցավ իր ծառա-
յությանը: Ահա արդեն յերրորդ տարին է, — վերջացրեց նա, —
վոր ապրում եմ առանց Դունյայի, և վոր նրանից վոչ մի լուր
չունեմ: «Կենդանի՞» յե արդյոք, թե՞ վոչ, աստված գիտե: Ամեն
բան պատահում է: Նա վոչ առաջինն է, և վոչ ել վերջինը, վո-
րին հանել է խելքից անցորդ աստհակի մեկը, պահել է մի քիչ
ու գեն դեցել: Շղպեսները շատ կան Պետերբուրգում, — ջահել,
խելառ աղվկերք, — հետո խառ ու դումաշ են հաղնում, վաղիւ ել,
տեսար, վորոշն են ավյում փողոցայինների հետ: Մեկ մեկ վոր
միտք եմ անում, թե Դունյան ել, կարող է պատահել, հենց
եղտեղ քաշ է գալիս ու ձեռից գնում, կամ քիս հակառակ յետ նը-
րան գերեզման եմ ցանկանում...»:

Այդպես եր իմ բարեկամի, ծեր վերակացույի պատմածը,
վոր շարունակ ընդհատվում եր արտասուքներով, վոր հետաքրք-
րիւ կերպով արդում եր նա իր փեշով, ինչպես փութալան Տե-
րենտյիլը Դիմիտրևի՛ չքնաղ բալլադում: Այդ արտասուքները
մասամբ առաջանում էյին փունջից, վորից նա մի հինգ բաժակ
կոնձեց իր պատմության ընթացքում: Բայց ինչ ել վոր լիներ,
այդ արտասուքները շատ հուզեցին ինձ: Նրանից բաժանվելով,
յերկար չեյի կարողանում մոռանալ ծերունի վերակացույին,
յերկար մտածում էյի յետ խեղճ Դունյայի մասին...

Վաղուց չեր, վոր, նորից *** ավանով անցնելիս հիշեցի իմ

1. Ի. Ի. Դիմիտրևի (1760-1837) բանաստեղծ, ռուսական սենսիվնետալիզմի
խոշորագույն ներկայացուցիչներից մեկը:

բարեկամին: Յես իմացա, վոր այն կայարանը, վորի պետն եր
նա, արդեն վոչնչացված է: Իմ հարցին՝ «Կենդանի՞ յե արդյոք
ձեր վերակացուն», վոչ վոք չկարողացավ պատասխան տալ: Յես
վորոշեցի այցելել ծանոթ տեղերը, վերցրի ազատ ձիեր ու ճամ-
բա բնկա գեպի Ն. Դյուրը:

Դա պատահեց աչնանը: Գորշ ամպերը ծածկում էյին յեր-
կինքը: Յուրա քամին փչում եր հեծված արտերից, տանելով իր
հետ հանդիպած ծառերից պոկված կարմիր ու դեղին տերևները:
Յես դյուր հասա արևը մայր մտնելու ժամանակ և կանգ առա
փոստի տնակի առաջ:

Նախասենյակ (վորտեղ յերբեմն համբուրել եր ինձ խեղճ
Դունյան) դուրս յեկավ մի հաստ կին, և իմ հարցերին պատաս-
խանեց, վոր ծեր վերակացուն մի տարի յե ինչ մեռել է, վոր
նրա տանը բնակվում է գարեջրի մի վարպետ և վոր ինքն այդ
մարդու կինն է: Յես ավստոսացի իմ դուր ճանապարհորդության
— հարցրի յետ գարեջրի վարպետի կնոջը: — «Հարեցողությու-
նից, յեղբայր ջան», — պատասխանեց նա: — «Իսկ վորտեղ են
թաղել նրան»: «Գյուղից դուրս, իր հանդուցյալ կնոջ մոտ»: —
«Չե՞ր կարող ինձ մի ճանապարհը ցույց տալ գեպի նրա գերեզ-
մանը»: — «Ինչի՞ չե: Ե՛յ, Վանկա, հերիք կտալի հետ քաշ դաս:
Հասա մի պարոնին տար գերեզմանատուն ու ցույց տուր վերա-
կացույի գերեզմանը»:

Այս խոսքերի վրա գզգզված շորերով, շիկահեր ու մի աչ-
քը կույր տղա դուրս վաղեց և անմիջապես տարավ ինձ գեպի
Դյուրի ծայրը:

— Ճանաչո՞ւմ էյիր դու հանգուցյալին, — հարցրի դրան ճա-
նապարհին:

— Վոնց չեյի ճանաչում: Նա յե սովորեցրել ինձ չվիներ շի-
նել: Լինում եր (ողորմի նրա հոգուն), վոր գլխետնից գալիս
մենք յետևից կանչում էյինք՝ «Պապի՛, պապի՛, պնդուկ տա՛ս»:
— և նա մեզ պնդուկ եր բաժանում: Ենճա՛ն եր խաղում մեզ
հետ:

— Իսկ անցորդներն իսկի հիշո՞ւմ են նրան:

— Դե՛, հիմի անցորդներ քիչ կան: Մեկ մեկ գուցե ատենա-
կալը յերևա ևստեղերը, դե նա ել ի՛նչ անի մեռելների հետ:

Այ, ամառն ետեղից անցնում եր մի տիկին, այ նա հարցրեց ծեր վերակացույի մասին ու գերեզմանն ել գնաց տեսնելու:

— Ի՞նչ տիկին, — հարցրի յես հետաքրքրությամբ:

— Մի չառ սիրուն տիկին, — պատասխանեց տղան, — յեկել եր նա կառետով, կառետին ել վեց հատ ձի յեր լծած, յերեք հատ փոքրիկ պարոնիկներ կային իրենց ծծաճ հետ, մեկ ել մի ու շնիկ կար: Յեվ վոր չառացին նրան, թե ծեր վերակացուն մեռել ե, անպես լաց յեղավ ու յերեխաներին ասաց. «Ուելոք նրատեք, յես գնամ գերեզմանատուն»: Իսկ յես մեջ ընկա, վոր ճանապարհը ցույց տամ նրան: Բայց տիկինն ասաց՝ «Յես ինքն ճանապարհը գիտեմ»: Յեվ ինձ արծաթ հինգ կոպեկանոց տվեց — ենպես մի բարի տիկին եր...»:

Մենք յեկանք գերեզմանատուն, մի մերկ տեղ, առանց ցանկապատի փայտյա խաչերով ծածկված, վորտեղ մի ծառի ըստ վեր անգամ չեր յերևում: Կյանքիս մեջ այսպիսի տխուր գերեզմանատուն չեյի տեսել:

— Հրե'ս ծեր վերակացույի գերեզմանը, — ասաց ինձ տղան, ցատկելով ավաղի մի կույտի վրա, վորի մեջ ցցված եր մի ու խաչ՝ պղնձյա սրբապատկերով:

— Յեվ տիկինը յեկավ հատեղ, — հարցրի յես:

— Յեկավ, — պատասխանեց վանկան, — յես նայում եյի նրան հեռվից: Նա պառկեց ետեղ ու յերկար պառկած եր: Հետո տիկինը գնաց գյուղ ու կանչեց տերտերին, փող տվեց նրան ու գնաց, ինձ ել մի արծաթ հինգ կոպեկանոց տվեց — ենպես մի լավ տիկին ե'ր:

Յես ել տվի տղային մի հինգ կոպեկանոց և արդեն չեյի ամիսսում վոչ ճանապարհորդությունս, վոչ ել իմ ծախսած յոթ ուրբին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԿՐԱԿՈՅ	3
2. ԲՈՒՔԸ	18
3. ՓՈՍՏԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՅՈՒՆ	33



Պատ. խմբագիր՝ ՍՏ. ԶՈՐՅԱՆ
Մրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Գլավրիտի լիազոր Կ— 4575, Հրատ. 3996

Պատվեր 364. տիրած 4000. թուղթ 62×94.

Հեղինակ. մամ. 2½, տպադր. մամ. 3, մի մամ. 38400 նիշ.

Յերեան, Պետհրատի տպարան, Լենինի փող., № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0303995

13.130